



Handwritten text in a cursive script, possibly Ottoman Turkish, located at the top of the page.

Printed in Turkey

Handwritten text in a cursive script, possibly Ottoman Turkish, located in the lower middle section of the page.

241 1695-122.

6/Տ Շ Մ Ե Բ Ի Տ
Ի ՄԵՍՏՈՒԹԻՒՆ

1695-ԱԶ Կ ԱՍ *Printed in 1718*

Խոնարհութեամբ ոմանք հզօրագոյնք առ
ի ածել զսիրտս մարդկան։

Ի ԲԱՐԻ ԵՐԿԻՈՂՆ ԱՄ
դասակարգեցեալք։

Այս իւրաքանչիւրոյ անունն շախա
թու։ հանդերձ ուսումնադրութիւն։

ԱՂԱԳ Ս ԲԱՐԵՊԷՍ
ԽՈՍՏՈՎԱՆԵԼՈՅ։

Շարտրեցաւ Իստուրէի յոմինէ և արքա
դէմէ և հոգեւոյ գործողէ ի հորդէ (3) նեանց
և լարգանեցաւ ի հոյ բառ-բառն յայլի
ոմինէ Բ. Դ ծառայէ ի հոյն հորդէն։

Ի հայրապետութեան ՏՆ Աճատրի
հայոց կաթողիկոսի։

Ի ԹՎԷՆ ՎԻՆ. ԱՃԺՐ. ԵՒ հայոց։
1718. ԱՃԿԷ. ՅԱԼՆՎԱՐԻ. ԻՆ։

Ի Մայրաքաղաքի և անդամաւորացի։
հրատնաւ Բժմաւորաց։

9267-57/232





ՆԼԻՆ ԼԻՆ ԼՆ ԲԻՆ ԻՆ
ԼԻՆ

ՀԻՄՆԵՐ ԸՆԹԵՐՅՈՒՆ

ԹԻՆ ԻՆ ԼԻՆ ԼՆ ԲԻՆ ԻՆ
 միում արգելանի առաջին
 տնիւն, արգելանին ևս այլ
 տնիւք ամենեքեան. Նմանապէս ի
 մարդ: Եթէ առաջին զօրութի նր,
 որ է զօրութի իմացողական, խափա
 նիցի անդիտութի կամ անմտադրու
 թիւ, կամքն ևս որ պարտի առաջնոր
 դիւ ի զօրութի այնմանի, իբրեւ ի
 լուսոյ, ոչ ապա ուղղապէս գործէ,
 բայց անկարգութի եւն ամ արարմունք
 նր.

նր. Ուստի ոչ է պարտ մեզ, զար
 մանալ ընդ անուղիղ և մեղսալիւր վա
 րուց այսօրեայ Վարիստոնէից: աս
 պատճառն, այսինքն անգիտութի
 կամ անուշադրութի նց, ի վր ճշմար
 տութեանց հաւատոյ. Այս այնորիկ
 ասէ իմաստուն Սողոմոն թէ ուր է
 անգիտութի, անդ ոչ է բարի: և
 դարձեալ ողբաձայն մարգարէ հա
 ռաչելով հառաչէ այսպէս: ապակա
 նեցաւ ապականութե ամ երկիր,
 զի ոչ գոյ մարդ որ մտադիր լինի:
 Ուրեմն բաղձալի ընթերցողդ, զի
 փի և դու ըմբռնիցիս ի կործանումն
 այն, ընծայեմ քեզ ի մտածումն զճշ
 մարիտ իմաստութի, և աղաչեմ զքեզ
 վն փրկութե եղկելի հոգւոյդ, զի
 նայիցիս ի նա սուղ ինչ ժամանակ
 յիւրաքանչիւրում աւուր կենաց քոց.
 հաւաքեցի քեզ ի գրգուկիս այսմիկ
 զոր ինչ թուեցաւ ինձ, հզօրագոյն
 լինիլ ի մէջ Վարիստոնէական խոկ
 մանց, և աներկբայելի ճշմարտութեց,
 առ ի հեռացուցանել զքեզ ի մեղաց,

և զարհուրեցուցանել զքեզ 'ի չարչա
րանաց այնցանէ, որք 'ի վր կան մե
ղաւորին, և հասանելոյք են նմա,
զկնի սակաւ ինչ աւուրց, զի մի և
դու անկանիցիս 'ինն, և տառապիցիս
յաւիտեան.

Եւ արդ զի շահաւէտ լիցի քեզ մա
տենիկս այս, խնդրեմ 'ի քէն, զի այս
սկէս արասցես, յամ առաւօտու յետ
յառնելոյ քո յանկողնէ, գետնաչափ
խոնարհեալ երկրպագեալ Տէ այնո
րիկ, որ ըստեղծն զքեզ, գոհաբա
նեալ զնա վս այնքան բարութեց,
զորս անդադար և առատապէս ներ
հեղանէ 'ի քեզ, և խնդրեալ 'ինմանէ
զերկնային լոյսն, առ 'ի բարեպէս
Ճանաչելոյ, եւ որչափ մեծ և անհ
նարին չարութի է անցանել զպատո
ւիրանօք նր: ոպ զի առաջնորդեալ
լուսով այնոճիկ, բարեկարգիցես ապա
ըստ օրինադ Վի զայնօրեայ կեցա
ղավարութի քո. Հիտ այնորիկ զայն
մտածութի կարգասցես, որ է շտրա
դառեալ 'ինմին տւուր, և կարդաս
ցեո

ցես զնա՝ ոչ արագապէս, այլ հան
դարտաբար՝ և զգուշապէս, սակաւ
առ սակաւ, մտադիր լինելով 'ի վր
խորհրդոց համայնից, և յիշելով թէ
'ի վր ծովու, ոչ որսան զվարդարիտսն
նաւք այնոքիկ, որք այսր և անդր
երթան ընթանան, բայց այնոքիկ
որսան, որոց զտեղի առեալ յարամ
նան և աշխատին.

Իսկ եթէ երբեմն ոչ թոյլ տայցեն
քեզ կարեւորք զբաղմունք ոմանք,
սկսել 'ի մտածումն ինչ, այնքան
ժամանակ, որքան հարկաւոր էր
առ 'ի խորապէս քննել, և երկար
մտադրութե լիապէս ըմբանել զճշ
մարտութի որ 'ի նմա է պարունա
կեալ, սակայն անխափան ընթերցիր
գոնեայ զմասն մի, ոպ և կարասցես.
Թերևս բաւական լիցի քեզ մի և
եթ պարզ ակնարկութի 'ի ճշմար
տութե առաջադրելումն, զի առ ժա
մայն բոլորով սրտիւ յօժարիցիս 'ի
նա, և նմա հետեւիցիս 'ի գործառու
թիւք: Բազմիցս անգամ յայսմ բանի
երևի

է այն բարեկամ, որ 'ի բաց Թողեալ
 զբարեկամն իւր, աստէ, Թշնամէ,
 հալածէ զնա՝ Մի Թէ՛ն ոչ անգոսնէ
 և ծաղր առնէ զդատաւորն իւր,
 այն անդունդ չարագործ, որ անա
 մօթ, անպատկառ, և աներկիւղ մե
 ղանչէ 'ի աչս նր և դեմ յանդիման.
 Ապա մի Թէ՛ Աժ ոչ իցէ ք՞ ՏՐ,
 ք՞ բարեկամ, ք՞ հայր, ք՞ դատա
 ւոր, որ տեսանէ զմեղս ք՞, և գար
 շի անբաւապէս 'ի նոցանէ. 'ի մա՛ ու
 բեմն, եթէ ոչ արհամարես զԱժ
 գիտաւորութեա՛ն, յորժամ մեղանչես,
 այլ արհամարես զնա՛ գործառութեա՛ն,
 ոչ հպատակելով օրինաց նր, ոչ երկն
 ջելով 'ի գատաստանէ նր, ոչ սիրե
 լով զամենասիրելի բարութի նր, ոչ
 պատկառելով յամենամեծ վայելչու
 Թէ նր, և ոչ ամաչելով յառաջակայ
 ութէ, ամենալիր ՏՆ այնորիկ, որ
 տեսանէ զամօթագործութիս ք՞,
 սքստկապէս արգելէ առնել զնս, և
 այնչափ զզուի 'ի նոցանէ, մինչ զի
 մեռանէր աւիտեանական Աժ՝ 'ի ձեռն
 մեղաց

մեղաց քոց, եթէ կարէր մեռանիլ :
այնպէս ուսուցանեն Ածաբանք, ասե-
լով թէ մեղաւոր ունայնացուցանե-
կերպիւն ինչ, որչափ կար է նմա՝
զաւիտենական Ած : քան զի եթէ
հնար էր, անչափապէս տրտմեցու-
ցանէր զնա, և այն անչափ տրտմու-
թէն ոչընչանայր աւիտենական Ած
եթէ կարէր ոչընչանալ : Տես ուրեմն
եթէ ոչ պարտիս յոյժգնապէս զար-
հուրիլ 'ի մեղաց, և իջ ասել թէ ոս
ոչ մեղանչեմ առ 'ի անյարգելոյ զԱծ :
միայն զհաճցան սրտիս կատարեմ,
և դանկուութեց մարմնոյս հետեւիմ :
Ածառպան ես, գարշելի մեղաւոր,
լուեա՛, և զամօթի հարեալ խոստովան-
լեր 'ի սրտի քում, զամենաչար ամ
պարտունանութիդ քո :

Ք. Իսկ. Բէ ոչ է որհոտորեալ :

Ստածեա՛ թէ զոր արհամարես, և
թէ ոչ է այն Տըն, զոր այնպէս
խոստան առնես 'ի մեղանչելն քում.
ուշադիւր ընր, և կերպարանեա՛ 'ի միտս
քո,

քո, նախ զկեղեցկութի մի, այնչափ
վայելուչ, պայծառ, և փափագելի,
մինչև ապշեցուցանէ առ ժամայն,
և զմայլեցուցանէ զաչս և զսիրտս տե
սողաց, մինչև լաւագոյն իմն է, մի
միայն կէտ ժամանակի վայելել զտե
սութի նր, քան վայելել երկարութե
ամաց բազմաց զամ փափկութիս եր
կրի: մինչև առնթեր կեղեցկութե
այնորիկ, ոչ ինչ են, կամ յաւետ
զգո՛ւնելիք են այլ ամ սիրունութիք
և վայելչութիք: Երբորդ կերպա
րանեալ ի միտս քո զհանդիսավեհու
թի մի, այնքան պատուելի, պատկա
ռելի, և պաշտելի, մինչ զի բարձրա
գոյն իմն է ծառայել նմա, և զամ
վաստակս, վիշտս, և չարչարանս կրել
ի ծառայութի նր, քան թէ աշխար
հի ամենայնում տիրապետել, պատու
ւել, և ծառայել ի ժողովրդոց և ազ
գաց համայնից. Երբորդ կերպարա
նեալ ի միտս քո, զմի այնչափ մեծ
բարութի, և մարդասիրութի, մինչ
զի լաւ էր, եթէ փլուզեալք անկա
նէին

ներին երկինք, և իջիք դառնայր բո-
 վանդակ աշխարհն, և ոչ մեղանչե-
 որ նմա երբեք, և ոչ խորհրդով միայ-
 նով. Եւ այժմ ես հարցանեմ զքեզ.
 Թե զի՞նչ խորհեաք յաղագս Այ.
 Ինչո՞ւ ոչ ինչ. Աժ ամենեին անհա-
 սանելի է իմենք, Թե բանիւ և Թե
 խորհրդով. Սակայն յաւել ի խոհ
 մուսոդ եթէ կամիս, և խորհեաց ի
 միտս քո, զայլս և զայլս յողովս, և
 բիւրս կատարելութիս, կրկնեա՞ զնձ
 հազար և հազար անգամ, և դար-
 ձեաղ այնքանիցս կրկնեա՞, հազարա-
 պատկեա՞, բիւրապատկեա՞, որքանք
 են աստեղքն երկնից, անհատք յօ-
 դոց, և ջրական կաթքն ծովուց ամե-
 նեցուն: և յետոյ գիտասցի՞ր Թե այն
 ամ կատարելութիք, այնքանիցս ան-
 գամ կրկնեալք, և բազմապատկեալք
 ի միտս քո, անհունապես փոքրագոյն
 իմն են առ ընթեր Այ, քան փոք-
 րագոյն իցէ որդ մի, կամ մի հատ-
 աւազու, առ ընթեր բովանդակ աշ-
 խարհի. Երբժամ ասես Աժ. Իմանա-

գու զի՛նչ ասես. Եւ Թէ ի՛նչ է այն
 ԱԺ, որ ՚ի ոչ ընչէ արարչագործեաց
 միայնով կամաւ իւրով զերկինս, զեր
 կիր, և զամ՛ ինչ որ ՚ի նո՛ւ, որ միայ
 նով կամաւ իւրով կարէ վիրստին
 ունայնացուցանել զամ ինչ, որ ըստ
 նմին օրինակի, և նոյն հեշտութե
 կարէ ըստեղծանել զայլս աշխարհս
 բազումս, և անթիւս, մեծագոյնս,
 և վայելչագոյնս, և սոյնպէս ՚ի մի
 կէտ ժամանակի գործուցանել զնո՛ւ
 ՚ի ոչ ինչ, եթէ կամի. Ի մանաս Թէ
 ի՛նչ է այն ԱԺ, աւիտենական, ան
 չափ, անեզր, ամենակալ, ամենակա
 րօղ, ամենիմաստ, ամենափարթում,
 ամենավայելուչ, ամենակատար, որոյ
 տեսութե միայնիւ երջանկանուն ան
 պատմելապէս զուարթունք երկնից,
 և երջանկանայիր ևս գույաւիտեան,
 եթէ կամէիր. Սակայն զայնքան ան
 ճառելի և անիմանալի Տրն, զայն
 քան առատաբուղիս աղբիւրն ամ
 բարութեց, վայելչութեց, մեծու
 Թեց, անորգեոս և կոխան առնես մե
 զանչութե

դանչութիւն քով, և չ զարհուրիս, և
 ոչ անշնչանաս և մեռանիս, մտանե
 լով զայս.

Գ. Դոհ. Բէ ով է որհամորոշ.

Ստածեալ թէ ով է այն մեղաւորն,
 որ այնպէս անյարգե զայն ամենա
 պատուելի Տէն, և այնչափ հպար
 տանայ, և սրտմտի ընդ դէմ նր.
 Ուրեմն նշմարեալ զքեզ, նախ ըստ
 մարմնոյդ: մի թէ այլ ինչ ես գու
 ըստ մարմնոյդ, քան ունայնութի
 ինչ, կաւով զգածեալ, և ձեացու
 ցեալ: սուղ ինչ ժամանակի առաջ,
 ամենակն ոչ ինչ էիր, և սախաւ մի
 աւուրց հետեւ, եղիցիս որդանց 'ի
 կերակուր. Արդ' այդ խոշորակեր
 պեալ կաւ, այդ կերակուրդ որդանց
 յանդգնի ճագատամարտիլ ընդ դէմ
 Տէն բոլորեց. Երկրորդ, նշմարեալ
 զքեզ ըստ հոգւոյդ, և տես թէ 'ի
 նոյն կէտ ժամանակի, յորում յղա
 ցար յարդանդի մօրդ, 'ի ձեռն սկզբնա
 կան մեղաց եղեր թշնամի ւն, գերի

աատանայի, Թափուր 'ի շնորհաց, 'ի
 բաց հերքեալ յերկնից, և ստորան
 կեալ Թշուճառութեց անթուճելեաց:
 'Ի ըստեղծելութի անտի քումմե,
 Ժառանգութի քո եղև խաճարեալ
 մտաց անհնարին անգիտութի, ան
 չափ չարութի կամաց, անչափ տկա
 րութի առ 'ի գործել զբարի, ան
 չափ յօժարութի առ 'ի գործել զամ
 չար, յանդուռ, անագ, և անսանձե
 լիք ախտութիք օրտի, և մարմնոյ
 ցանկութիք: Այլ և Ժառանգութե
 այնպիսոյն վեր ամբը և դու զբա
 զումս 'ի քէն, այսինքն զայնքան ներ
 գործական մեղան, չար սովորութիսն,
 պատժապարտութիսն, օրովք անար
 ժան եղեր ամ օգնութե յերկնից:
 Իսկ եթէ կամիս լաճագոյն ևս ճա
 նաչել զքեզ, առադրեալ զանձն քո,
 անհամար բազմութե բանաճորաց
 հանրից: զի՞նչ եղիցիս դու 'ի բաղ
 դատութեան քում, ընդ համօրեն
 մարդկան աշխարհիս, 'ի բաղդատու
 2 Է Բեան

N
 5
 1
 262
 E

Թեան քում ընդ այնոցիկ ամենե
 ցուն որք եղեն 'ի սկզբանէ արարա
 ծոց մինչև ցայսօր: ընդ այնոցիկ
 ամենեցուն որք այժմ կենդանիք են:
 ընդ այնոցիկ ամենեցուն որք լինե
 լոցք են մինչև 'ի կատարածն: զի՞նչ
 եղիցիս դու 'ի բաղդատիլն քս, ընդ
 հրեշտակաց ամենեցուն, և այլոց բազ
 մաց, և անհամարից բանաւորաց,
 որք անսպառ կարեն ըստեղծանիլ
 յայ. Ո՛վ ճանաչէր զքեզ 'ի մէջ այն
 չափ բազմաժողով, և լայնատարած
 ամբօխին. Ո՛վ դիտէր զքեզ. Ո՛վ հա
 մարէր զքեզ առ իր ինչ. Իսկ եթէ
 այլ ինչ ոչ ես դու առաջի բազմամ
 բոխ գումարութե ըստեղծո՞ւնածոց,
 քան թէ ամենեին ոչ ինչ: տես ու
 բեմն զինչ եղիցիս առաջի Ա.Յ, որոյ
 յանդիման, բնաւ ոչ ինչ են ըստեղ
 ծո՞ւնածք ամենեքեան, ըստ ասացե
 լումն Եսայայ Մարգարէի. Եւ
 այժմ զի՞նչ ասես. Մի թէ կարաս
 ցես այլ ևս մեղանչել Ա.Յ, ընդդիմա
 մարտիլ

մարտիլ նր, և ասել նմա, դու կամիս,
ես ոչ կամիմ: դու հրամայես, ես ոչ
հնազանդիմ: ոչ անիմանալի հպար
տութեան: ոչ էր այդչափ ամպար
տաւան մռչիւն մի, որ շարժեալ 'ի
պատերազմ, և թռուցեալ կամէր ար
ձակիլ 'ի վր արեգական, ըմբռնել,
կոխել, և փշրել զնա:

Մտչեանք.

Այ գիտեմ ով ՏՐ իմ, ընդ որում
առանել պարտիմ զարմանալ: Կամ
ընդ անյուր երկայնամտութե քում,
առ 'ի համբերել անարգանաց խնդ,
կամ ընդ ամենալիբբ անզգամութե
իմում, առ 'ի անյարգել զքեզ. Եւ
նշմարեմ զքեզ 'ի լուսափայլ աթոռն
Ածութեդ քոյ, շրջապատեալ յան
թիւ բազմութե հրեշտակաց, և հոգ
ւոյ երանելեաց, որոց նայելով 'ի
քեզ, դողան, պատկառին, և հիանա
լով աղազակեն առանց դադարման.
Սբ. Սբ. Սբ. ՏՐ զօրութեանց,
և

և ոչ բաժնի է նոյն փառաբանել զքեզ
 այդպէս: այլ առաւել ծածկեն եր
 կիւղի՛ն զերեսս իւրեանց, և ՚ի վայր
 անկանին առաջի աթոռոյդ քոյ, իւր
 անարժանիք լինելով, կալ դէմ յան
 դիման ամենավայելչութեդ քում.
 Եւ ես արհամարելի, կոխան առնե
 լի, և փշրելի որդս, մինչ դեռ սոքոս
 եկիրպագանեն քեզ, սիրեն և պաշ
 տեն զքեզ, և ոչ կարեն ըստ արժան
 ւոյն երկիրպագանել սիրել, և պաշ
 տել, ես ամենանգոսնելի որդս,
 յանդգնիմ անգոսնել զքեզ, և առ
 ոտս արկանել: ոչ կարես դու ՏԻ
 բարեգութ, առաւել գլխալ, քան
 զայս համբերելով, և ոչ կարեմ ես
 ամենաչարս, առաւել չարանալ քան
 զայս առնելով. Պարտ էր ՚ի մեղան
 ջնն իմում սասանիլ, պատառիլ զեր
 կիրն, և ընկղմել զիս ՚ի խորս անգն
 դոց: պարտ էր զտարերս ոչ ևս կալ
 ինձ ՚ի ծառայութի, այլ աւել տ խո
 աովիլ, յառնել ՚ի վր իմ և սատակել
 զիս:

զիս : պարտ էր զարեգակն խաճարիլ
 և ոչ ևս լուսանորել զիս : կամ աճեա
 պարտ էր զնա հարել զիս այնքն կայծա
 կանօք, որքանք են ճառաբայթքն նր.
 Վարտ էր քեզ ամենակարօղ ԱԾ,
 'ի մեղանչելն իմուժ, ըստեղծանել
 առ ժամայն վսիմ, զնոր դժոխ իմն,
 անչափապատիկ զարհուրելագոյն, և
 անտանելագոյն : այո այո պարտ էր :
 քանզի աշարեալ դժոխն այն, որ
 այժմ կայ, ոչ է բաճական առ 'ի
 տանձել զիս ըստ արժանեաց. Եւ
 սակայն ո՞վ հայր ողորմութեց : փո
 խանակ այդ ամի, դեռ ևս կամիս
 շնորհել ինձ զթողութի, և հրաւիրես
 իսկ դու զիս առաջ 'ի վերհաշտումն չ
 քեզ. Ո՛հ սքանչելի բարերարութեւ
 ո՛հ այնքան մեծ, և անպատում համ
 բերութեան, որքան է մեծ և անպա
 տում ինքն ԱԾ. Լո՛ւարուք ուրեմն
 ով դուք երանեալք երկնից ամենե
 քեան, զայս անկեղծ և հաճաստի
 առաջադրութիւն իմ : զի փոքր 'ի
 շատե՛

և շատե, և որչափ կար է ինձ, երախ
 տադէտ և շնորհակալ իցեմ Այ Տն
 իմոյ, վս այնչափ զարմանալի սիրոյն
 նր, երդնլով երդնում այսպէս, Թե
 և ոչ գոյր դժոխ, և ոչ տանձանք ինչ
 վս մեղաւորաց, սակայն զղջանայի,
 և զզոճեալ առաւել գարշեի 'ի մե
 զաց իմոց, քան Թե 'ի չարե այլմէ
 ամէ: այնու միայն զի մեղանջելով
 դառնացուցի զամենաբարի, և զամե
 նասիրելի Տն իմ, արարիչ իմ,
 և հայրն իմ: և ոչ կամեի կրկին
 մեղանջել նմա, Թող հասանելոց էր
 ինձ 'ի ձեռն մեղաց, Թագաւորութի
 բովանդակ աշխարհին, և ոչ գոյր
 հետ կենցաղոյս այսորիչ վտանգ ինչ
 պատժոց և չարչարանաց. Այսու
 հետե ով երանեալք երկնից անպա
 կաս համարեցից զՏն ձեր, և զՏն
 իմ, իբրեւ զանհուն բարութի ուղիս
 է, իբրեւ անսահմանելի, և անփոխադ
 րելի բարութի, որ միայն անբաւ
 որդորմութի խրով, կարէ յաղթել
 անբաւ

անբաւ չորութե իմում. Այս ան
 պարկեշտ աչքս, այս չարեբախտ
 ձեռքս, այս թշուառեալ լեզուս,
 այս տիղմակազմ, նեխելի, և՛ ի հող
 դառնալի մարմինս, որ եղև գործի
 մեղանջութե, կամիմ զի լիցի այսու
 հետև գործի ապաշխարութեան.
 Դու Տ՞ր իմ և հայրն իմ, վ՞ե ինքեան
 բարերարութեանդ քոյ, վ՞ փառաց
 անուն քոյ, վ՞ անպակասելի հաւա
 տարմութեանդ քոյ ՚ի խոստմունսն
 քոյս Ածայինս, արա՛ մաղթեմ ՚ի
 քէն, զի լիցի այնպէս: և բազմացու
 ցանելով զգթութիս ՚ի վ՞ր գթու
 թեանց, փոխեա՛ և նորոգեա՛ զսիրտ
 իմ: և յետոյ հաստատեա՛ զնա՛ այսպէս
 թէ: որքան անառակ որդիս, լիբբ
 և անզգամ ծառայս ապստամբեցայ
 ՚ի քէն, այնքան հնազանդիցիմ և ծա
 ւայցեմ քեզ: որքան անյարգեցի
 զքեզ, այնքան պստոնիցեմ և փառա
 չորիցեմ: որքան դառնացուցի զքեզ,
 այնքան սիրիցեմ, և զհաճոյսն քոյս
 կատարիցեմ:

կատարիցեմ, այժմ, միշտ, և մինչե
յաւելտեանս յաւելտենից. Ամէն:

ԵՐԿՐՈՐԴ ՄՏԸՆՕՈՒ

Թին վն երկրորդ աւուրն շափաթու.

Ըստիս պարտիայից ոմոնց որովք ծանրանայ
կորի յոյժ մշտն.

մ. մասն. պարտիայոսնի որդւոյ.

Մտածեալ Թէ ուր մեղար. Այսինքն
մտածեալ Թէ մեղար առաջի ՏՆ
ինքեան, որ տեսանէր զքեզ. Ուրեմն
'ի աչս ինքեան օրինադրին, յանդգնե
ցար առ ոտս արկանել և կոխել զօ
րէնսնը: 'ի աչս ինքեան դատաւորին,
Ծաղրեցեր զօգառնալիւն և զպատիժս
նը: 'ի աչս ինքեան փրկչին, ընդոտ
նեցեր և կոխան արարեր զամենամա
քուր արիւննը: 'ի աչս ինքեան ամե
նալայելուչ հանդիսալիւ հուԹԵ Այ,
հրաժարեցար 'ի բարեկամութե նը,
մատնեցեր զքեզ կամաւորապէս և
յօժարաբար 'ի դերութի սատանայի
Թշնամւոյն նը, և միաբանեալ ընդ
ամա,

սմա՛, հնարեցեր ամենալրբաբար խել
 'ի գլխոյ ամենակալին, զԹագն նո՛ր,
 և 'ի վայր ձգել զինքն 'ի յաթոռոյ
 իւրմէ. կարճապէս ասեմ ընդ Երե
 մեայ Մարգարէի, արարեր զչարիս
 և կարացեր: այսինքն մի Թէ՛ այդչափ
 սրտմտեցար և ամպարտաւանացար.
 Խրատեմ զքեզ խնդրել այսուհետե
 զտեղ իմն, յորում ոչ տեսանիցէ զքեզ
 ԱՃ, յորժամ մեղցես նմա: քանզի
 ինչպէս անզգամեսցիս առնել առա
 ջի Այ ամենակարօղի, և մեղաց
 վրժխընդրօղի, ինչպէս անզգամե
 ցիս առնել առաջի ամենամաքուր
 աչաց նո՛ր, զայն զազրալի մեղօ, զորս
 ոչ անզգամէիր առնել առաջի իմ:
 Փոքրագոյն իմն եր մեղանչել առա
 ջի բովանդակ աշխարհի, բան Թէ
 մեղանչել առաջի Այ միանոյ.

Բ. Դասն պարտեայութի ժամանակի.

Առաջեմ Թէ յոր ժամանակի մե

զար. Այսինքն մտածեա՛ թէ մեղար
 Այ և դառնապէս դառնացուցեր
 զնա՛, յորմէ հետե դարձար որդի նր
 'ի ձեռն մկրտութե՛, և երգո՛ւար
 առաջի երկնից, և երկրի, անխափան
 և անփոփոխ սիրել և պաշտել զնա՛
 յամ աճուրս կենաց քոց: դառնացու
 ցեր զնա՛, յորմէ հետե ընկալա՛ն
 զքեզ այնքանից՝ անգամ 'ի հաղոր
 դութե՛ Աբ խորհրդոց եկեղեցւոյ:
 դառնացուցեր զնա՛, յորմէ հետե
 տեսեր թէ անձառելի խոնարհութե՛ք
 և մարդասիրութե՛ք մեռա՛ն դառնա
 կսկիծ և ամօթալից մահով, զի մի
 մեղանչիցես նմա՛. Մտածեա՛ թէ յետ
 այնքանեաց պատճառաց չմեղանչելոյ
 նմա՛, սակայն մեղար և աճախեցեր
 ևս ի մեղոն ընդդէմ նր. Աճ ըստեղծ
 զքեզ, միայնով բարերարութե՛ք իւ
 րով, և ընտրեաց զքեզ 'ի մէջ այլոց ան
 թո՛ւնելեաց, զորս կարէր ըստեղծանել,
 և որոց ոչ էր գործեալ երբեք զմեզ
 ինչ, եթէ ըստեղծանէր զնա՛: ըստեղծ
 զքեզ

զքեզ ԱՅ 'ի մէջ ուղղադաւան
 Քրիստոնէից , և 'ի փայլատակեալ
 լոյսն Ջմարիտ Սբ հաւատոյ : յարա
 պահէ զքեզ յմմ կիտում ժամանա
 կի , այսպէս թէ 'ի ոչ ինչ դառնայիր
 առ ժամայն , եթէ մի միայն կէտ
 ժամանակի թողոյր զքեզ անպահա
 կան : ԱՅ հայրական խնամութիւն
 իւրով անդադար հոգայ ուտելեաց ,
 ըմպելեաց , յագծելեաց , և բնակարա
 նաց քոց : ոչ միայն աշխատեցուցանէ
 'ի ծառայութեան քում զարարածսն
 ստորայինս , բայց 'ի նոյն սոլազու պա
 րապեցուցանէ ևս , զնախարարսն
 տան իւրոյ , և զինքեանս հրեշտակս :
 ԱՅ ներհեղանէ 'ի քեզ զայնքան Սբ
 ազգեցութիւն : 'ի բաց մերժէ 'ի քէն
 զայնքան վտանգաւորութիւն : խնայե
 զքեզ յայնքան պատժոցն , որոց ար
 ժանի եղեր : վնքո թափեաց զամենա
 պատուական արիւն իւր , վնքո վճա
 րեաց զկեանս իւր , վնքո , և 'ի կե
 րակութիւն հոգւոյդ , միշտ ընծայեալ
 կայ

կայ 'ի նմանէ, երկիր պագելի մարմին
 իւր, 'ի Սբ խորհուրդն հաղորդու
 թե: վն քո բացեալ կան 'ի նմանէ
 ամ գանձք շնորհաց իւրոյ, 'ի կենցա
 ղոյս յայտիկ, և պատրաստեալ 'ի հան
 դերձելումն մտնչենաւոր երանու
 թի արքայութե երկնից. ՍԺ հանա
 պազ խորհի զքէն, նա և հանապազ
 մայրական խանդաղատանօք պահէ
 գգունէ զքեզ 'ի գիրգս իւր, իբրեւ
 զմատղաշ մանկտի ոք և սնուցանէ
 զքեզ 'ի Ծոցն իւր, սղնդեամբք անձա
 ուելի մարդասիրութե իւրոյ. Եւ դու
 'ի նոյն ժամ զայբացուցանես զայն
 քան երախտաւոր, և բարերար հայրն
 քո: որչափ կար է քեզ, փնասես և
 տառապեցուցանես զնա, խաժատես
 ատամամբքդ, և եղնգամբքդ պատա
 ուես կերպիւ ինչ զսգինս, որք կերպ
 կրեն և կեցուցանեն զքեզ: ես այս
 պես համարեմ թէ ինքեանք վայելե
 նի գազանք ամաչէին զամօթն մեծ,
 եթէ ունելով զճանաչումն զոր ու
 նիս

Նիս դու, ացդպէս առնէին երբեմն
ընդդէմ ծնողաց, կամ բարերարից
իւրեանց.

Գ. Եսն. գործոյոսի կրարիւթից.

Ատածեալ թէ ինչպէս մեղար, և
որ իրաց կիրարկութեան իրաւեցար
ընդդէմ Ա. Ոչ միայն 'ի աչս և 'ի
գերկս նր գործեցեր զմեղս: Բայց ևս
'ի կիր առեր զինքեանս երախտաւոր
ութեան նր, և նորօք իբրև զինուք
վարեցար, առ 'ի հալածել զնա.
Այնք զգայարանք, զորս տունեալ եր
բեզ Ած 'ի պէտս և 'ի օգուտս հոգ
ւոյդ, յոր գործս ածեր զնա. Այնք
աչքդ, այնք ձեռքդ, թշուառեալ
գործ իք այնչափ անցնաց մեծագունից,
այն բոլոր մարմին այնքանիցս անգամ
սրբակերտեալ մարմնով ինքնին Տն,
և իսկական ներկայութեան նր, 'ի սոս
կալի խորհուրդն որքոյ հաղորդու
թեան, առ ինչ վարեցար նովաւ.
Տունեալ եր բեզ Ած զկամքն յար
մար

մար և բաճական, առ 'ի սիրել զԾայ
 րագոյն բարի, որ ինքն է: և դու
 զայս աղբիւր կենաց անխտենականաց
 անգոսնելով և 'ի բաց թողլով, զայլ
 ինչ ոչ սիրես, և զայլ ինչ ոչ խնդրես,
 քան թէ ըմպել 'ի տիղմական, գար
 շահոտ, և զազրալի խորոյ ամ չար
 ցանկութեց. Տո՛ւեալ էր քեզ ԱՃ
 զիմացողական զօրութի մի, որ կարէ
 ճանաչել զգերագոյն ճշմարտութի:
 առ ինչ վարեցար զօրութի այնո՛ւիկ:
 առ այս վարեցար, զի ամ անուր զնոր
 կերպս գտանիցես, առ 'ի նորհնարա
 պես դառնացուցանել զպարդւօղննր.
 Մա՛ և ոչ բաճ է մեզ վարիլ 'ի չար
 ընդ դէմ Այ, արարածովք նր ամե
 նեքումբք, վարիմք ևս արարչի՛ն
 ինքեամբ ընդ դէմ ինքեան: ոպ նա
 ինքն ասէ Եսանայ Մարգարէի բա
 րանով: Ծառայեցուցեր զիս 'ի մեղս
 քո, և 'ի անօրէնութիս քո, աշխատ
 արարեր զիս. Այ զի ԱՃ բարեգութ
 է, և մարդասէր է, քաղցրասիրտ, և
 երկայնամիտ:

երկայնամիտ : վն զի համբերէ և յետս
 ձգէ զպատժադրութիսն : վն զի հաս-
 տատեալ է զԱբխորհուրդս եկեղե-
 ցւոյ 'ի բժշկութի մեղաց, այնու պատ-
 ճառան քամահեմք և նախատեմք
 զնա՛ համարձակագունապէս, և ասեմք
 Թէ զայս մեղս գործեցից, և ապա՛
 խոստովան եղէց . Ո՛հ սարսուլի չա-
 րութե՛ : ո՛չ է բա՛ն մարդոյ, մատնել
 զՏ՛րն իւր, և դարձուցանել ընդդէմ
 նմա՛ զնմա՛ արարածս նր՛ : կամի առա-
 ճել, զի ինքն ԱՃ, գործակից լիցի
 նմա՛, 'ի զարգանտելի ԱՃասպանման
 իւրում : ծառայեցոյց զնա՛, ասե
 Մարգարէ, 'ի անիրաւութիս իւր .

Մոլոխի.

Ո՛ճովդ բարութե, ԱՃ ամենաժբ :
 ամենարդար, և ամենամեղսատեաց :
 ո՛չ երբէք անկայ առ ոտս գթութեդ
 քոյ, ամաչութք մեծագունիւն, քան
 յայսմ աւուրն : յորում ածեալ իմ
 զմտաւ զսատանայական ապերախտու-
 Թի

Թի իմ, սարսափեալ զարհուրիմ, և
 աղմկեալ 'ի միտս, ոչ ևս գիտեմ զինչ
 ասիցեմ. Ուրեմն բա՛ւ ոչ էր ինձ
 անյարգել զքեզ գործածութե՛ք ին
 քեանց շնորհաց քոյ. մի՛ Թե պարտ
 էր ևս կացուցանել զքեզ ինձ 'ի սպա
 սու ընդ դէմ քեզ. Դու Տ՛ր իմ և
 Ա՛ծ իմ, 'ի ձեռն Սրբոյ հաճատոյ
 ծանուցեր ինձ զանբա՛ւելի գթու
 Թիդ քո: անըմբռնելի մարգասիրու
 Թեքով դատարկացուցեր զերակունս
 քոյս հանուրս, յամէ Սրբոյ յարենէ
 քումմէ, առ 'ի պատրաստել ինձ
 զայն քան փրկարար, և դիւրավարժ
 լո՛ւ աղումն մեղաց, 'ի Ա՛բ խորհուրդն
 խոստովանութե: և ես չար և ապա
 շնորհ մեղա՛ւորս այնու ճանաչմամբ
 մեղայ ընդ դէմ քեզ հրճո՛ւ ագուռնա
 բար, և աներկիւղագունապէս. Աս
 զի դու առա՛ւել բարի եղեր 'ի դէմս
 իմ, ես առա՛ւել վատթար եղէ 'ի
 դէմս քո: Վս՛ զի դու դիւրացուցեր
 ինձ զբուժումն մեղաց, ես այնու

զայրացուցի զքեզ անխնայագունս
 պէս, ասելով 'ի միտս իմ, խոստովա
 նեցայց: բա՛ւ է ինձ: Թէ անհա
 ճոյանայցեմ Այ, Թէ բարկացու
 ցանեմ զնա, ոչ ինչ բան է. Գտնեայ
 իցէր ինձ յօգել զպատճառանս ինչ
 անցանաց իմոց: բայց ոչ կարեմ յօ
 գել: քանզի ընդէր ապստամբեցայ
 'ի քե՛ն, ով իմ ամենաբարերար Տրն:
 Թերեւ եցէ Թէ բռնադատեաց զիս
 ուժգին հարկաւորութի իմն: ոչ պա
 տահեցաւ ինձ ամենևին այնպիսի
 հարկաւորութի: և ոչ ևս մեղայ քեզ,
 վս ստանալոյ զմեծ ինչ փարթամու
 թի, կամ վայելչապայծառ իշխանու
 թի: զնոտի բան, ունայնութի ինչ
 հաւանեցոյց, և ևս յօժարեցոյց զիս
 'ի մեղս: ոչ խոստացաւ ինձ բանսար
 կու, ոպ խոստանայր քեզ անապա
 տումն, զամ Թագաւորութիս աշխար
 հի, եթէ անկեայ երկիրպագանէի
 նմա: խոստացաւ ինձ զմի նանրեայ
 և ընդունայն հեշտութի, որ 'ի մի

Թօթափելն ական սպառեցաւ ,
 գնաց : խոստացաւ զմի այնքան զա
 զիր հեշտութի , մինչ զի խաւարն
 ինքնին ամաչեաց , և այժմ ևս ապա
 կանիւր օդն , 'ի լսելն զնա : և ես
 յիմարս խմելոյ աղագաւ յայն տեղմա
 խառն , ժանդահոտ , և փթեալ ջրոյն
 արհամարեցի զքեզ , անսահման ծովգ
 աւիտենական քաղցրութե , ընդէր
 բարկացոյց ամպարելտ զՏԻ՛ն , հար
 ցանեն 'ի սարսափումն իւրեանց մար
 գարեքն , ընդէր բարկացոյց զնա :
 Այո՛ ՏԻ՛ , վս այն փոքրիկ և գե
 ուանդ ամօթահեշտութե , առ իչ
 ինչ համարեցի զնմ բարութիւնսն քո :
 Այո՛ վս այն ամօթալից ունայնու
 թե հրաժարեցայ 'ի ստացմանէ շնոր
 հաց քոց : Թեպէտ մի և եթ աստի
 ճաննց լաւ համարելի է , քան
 զտերութի աշխարհաց բազմաց :
 Եւ այս ևս չարագոյն իմն է ան
 հունապէս , Թե՛ իչ միայն մեղայ քեզ ,
 վս ունայնութե այնորիկ , բայց մե
 ղայ

դայ քեզ, և մեղայ առաջի աջաց քոց •
 Չայս արարի ես, և ռակայն, ինչ որ
 և իցե, տեսանեմ զքեզ, ով հայր
 տղորմութեդ, զի բազկատարած, և
 զոճարթերես յօժարս վս անպա
 տում քաղցրասրտութեան, և անոխա
 կալութե քոյ, վեր ընդունել զիս,
 և Թողուլ ինձ զմեղս իմ, եթէ ճշար
 տապէս և բոլորով սրտիւ զղջանայ
 ցեմ։ Որով հետև այդպէս է, ահա
 գամ առ քեզ, վս սքանչելի բարու
 թեան այնորիկ, որ թէպէտ 'ի չար
 վարեցեալ յինէն այնքանիցս անգամ,
 տակաւին հանդուրժէ ապերախտու
 թեան իմում, և հրաւիրէ զիս 'ի
 վերհաշտումն ընդ քեզ։ ահա ուրեմն,
 ճշմարտապէս և 'ի բոլորե սրտե իմմէ
 զղջանամ, և առաւել գարշիմ 'ի մե
 դաց իմոց, քան թէ 'ի չարեաց հա
 մայնից, զղջանամ ընդ մեղս իմ,
 իբրև ընդ զարհուրելի մատնութե
 ընդ դեմ քեզ, իբրև ընդ դժոխային
 ապերախտութե։ Կամիմ հաստատաւ

րդէս այսուհետեւ, ինչ որ և իցէ, փոխել զկեանս իմ: Կամիմ այսուհետեւ առաւել մեռանիլ, քան թէ վերստին մեղանշել քեզ. Բայց ՏՐ ԱԾ, ոչ կարեմ ես առանց օգնութե քոյ, կատարել զայս առաջադրութիս իմ: Ուրեմն օգնեա՛ ինձ ով հայր գթութեց, աղաչեմ զքեզ վն՝ Սրբոց վիրաց քոց, որք իբրեւ զբերանս անխբաց հերքելիս աղաղակեն առ քեզ վն իմ, աղաչեմ զքեզ վն՝ արդեանց Սբ արեանդ քոյ, և չարչարանաց քոց անիմանալեաց, աղաչեմ զքեզ վն ինքեանէ քոյ, օգնեա՛ ինձ, և մի թողոյր երբեք, զի միւս ևս ապավարիցիմ այսուհետեւ բարեգթութեամբ քով, և միւս ևս զշնորհս քո Սբս դարձուցանեմ 'ի գործս անիրաւութե: ալ յաւիտաւոր ինձ, զի այնքան անըմբռնելի բարութիդ քո, և այնքան փրկարար և գիւրավարժ բժշկութի մեղաց, զոր պատրաստեցեր մեզ 'ի Սբ խորհուրդն խոստովանութե, լիցին ինձ նոր յորդորանք, և նոր խայթմունք,

առ 'ի ծառայել քեզ, և սիրել զքեզ
հաւատարմագունապէս, և անփոփո
խապէս. Ամէն.

ԵՐՐՈՐԴ ՄՏԸՆՈՒԹԻՒՆ,
վս երրորդ աւուրն շափաթու.

Լ. շոգոս տոբել-Բէ աս ընդդէմ դէպ և ընդ
դէմ դէպ.

Թ. Ժան. Բէ որչափ տոբէ Ժժ շոգոս.

Ստածեալ Թէ ԱՃ ատէ անշափա
պէս զմեղս: քանզի եթէ կամքն այն
չափ գարշի, և հեռանայ 'ի չարէ իւր
մէ, որչափ սիրէ և խնդրէ զբարին
իւր: պարտ է ասել Թէ որով հետև
ԱՃ սիրէ անհունապէս զբարութի
իւր. Այսինքն Թէ որով հետև ԱՃ
ինքն զինքն սիրէ, որ անհունաբարի
է և անհունասիրելի: ըստ նմին օրի
նակի, ատէ ԱՃ անհունապէս զմեղն,
որ է չարն իւր, այսինքն որ է ներ
հակ և թշնամի ամենաբարութե իւ
րոյ. Ուրեմն դիր 'ի միասին զԹՄ
ատելութի թշնամեաց ամենեցուն,
ընդ դէմ թշնամեաց իւրեանց: և
դարձեալ

դարձեալ վերաբերեալ զայն ամ զայ
 բազմեալ և ահաւորելի ատելութի,
 զոր ունին 'ի դժոխս ընդդէմ Այ
 դեք և դատապարտեալք ամենեքեան:
 որչափ մեծ և խիտ այնքան հաւա
 քեալ ատելութի, փոքրիկ է, կամ
 ևս ամենեին ոչ ինչ է, եթէ կամիս
 նմանեցուցանել զնա ընդ անասմա
 նելի ատելութե այնորիկ, որով ատէ
 Ած զամ մահականացու մեղքն.
 Իսկ արդ դու զայդչափ ատելի
 վեղքն պահես 'ի սրտի քում ամիսս
 և ամս բոլորս, գգոճես և խանդաղա
 տես զնա, օղ թէ իցէ, ոչ զարհու
 րելի նորակերպ գազանն ինչ, բայց
 առաւել մի զոռարթարար և խաղացող
 շիկ, կամ այլ ինչ ախորժելի անբան.

Բ. Եւսմ. Բէ ամ տալ զկտուրի.

Ատածեալ զի Ած ոչ միայն ատէ
 զմեղն: բայց ատէ ևս զմեղաւորն
 իրքնին, ըստ որում մեղաւոր է, առ
 հասարակ ատելիք են Այ ամբա
 լիշտ

րիչտ և ամբարշտութի նր, վկայեն
 Սբ գիրքն: Ած համարէ զմեղաւորն,
 ըստ որում մեղաւորէ, իբրեւ զԹշնա
 մին իւր, և ի պատճառէ մեղաց,
 Ած խնդրէ նմա՝ զչար անհուն և
 աւելի տենական, այսինքն զչարչարանս
 դժոխայինս: Երբքան ժամանակ մնայ
 մեղքն ի սրտի մեղաւորին, ոչ կարէ,
 և ոչ կամի Ած զբարեկամութի ինչ
 ունել ընդ նմա, և քանի ոչ հրաժա
 րի մեղանջօղն ի մեղաց, ոչ հաճոյա
 նայ, և ոչ կարէ հաճոյանալ Ած ընդ
 բարեգործութե ինչ, որ ի նմանէ.
 Այսպէս գիր ի միտս քո, Թէ գե
 րասուրբ կոյս Մարիամ, որ ամե
 նեին անմեղ էր, սակայն մահացօրէն
 մեղուցեալ իցէ, յորժամ կենդանի
 էր ի վր երկրի, յայնժամ ստուգա
 պէս Ած ատէր զնա, և առաւել
 գարշիւր ի մօրէ իւրմէ, քան Թէ
 ի օձէ զզուէլագունէ: և իսկոյն դա
 տապարտէր զնա ընդ այլոց ապօրտա
 բեալ հոգւոյ ի հօւր աւելի տենական:

առանց

առանց ոչ ինչ խնայելոյ 'ի նա, և ոչ
 վս նախընթաց արդեանց, և Սրբու
 Թեան նր, և ոչ վս ամենաբարձր,
 և ամենապատուելի Աճամայրութե
 նր. Բնաւ անհնարին է, լիապէս
 բմբռնել մտօք, զայս աներկբայելի
 Ճշմարտութի, և ի կարեն մարդիքն
 վերահասու լինիլ այն անչափելի ա
 տելութե, զոր ունի Աճ ընդդէմ
 մեղանորին. Լուր զիր մի անհաւա
 տալի, Թէպէտ ամենեկին Ճշմարիտ:
 այսինքն Թէ մահացու մեղք մի ա
 ռաւել ճանձրացուցանէ զԱճ, քան
 Թէ բերկրացուցանեն զնա հանուրք
 բարեգործութիք, անցեալք, առա
 ջիկայք, և ապակայք Սրբոց ամենե
 ցուն, 'ի միասին կուտեալք և բազմա
 ցուցեալք. Մեղք մի, ասեն Աճա
 բանք, առաւել ատելի է ԱՅ չարու
 Թք իւրով, քան հաճելիք իցեն նման
 բարութք իւրով ամ արդարագործու
 Թիք: և առաւել տրտմեցուցաներ
 վեղք մի զԱճ, եթէ ընդունակ իցեր
 տրտմութեան

տրտմութե , քան թէ զոճարձադու
 ցանէին զնա մի բարեգործութիւք ,
 ամ Սբութե և արդարութի Սբոց
 համայնից . Գգնոս սակցն , եթէ կամիս ,
 վատթար և կամակոր Քրիստոնէայ ,
 գնա միւս անգամ 'ի տունն այն , յո
 բում տգեղ և զզուելի չարակենցա
 ղավարութիւք քով , արկանես առ ոտս
 և կոխան առնես զամենապատկառե
 լի օրէնս Ռ.Ե. , գնա վերստին անդ
 եթէ կամիս , բայց յոչ լիցի քեզ ,
 թէ այն մեղանշական և ամօթալից
 մարմնահեշտութիւք , առաւել դառնա
 ցուցանես զՌ.Ժ. , քան ոչ զոճարթացու
 ցանէն զնա համօրէն Մարգարէք ,
 համօրէն Մահապետք , համօրէն
 Ռաքեայք , համօրէն Մարտիրոսք ,
 համօրէն Սոստովանօղք և Սբ կու
 սանք , համօրէն Հրեշտակք և երա
 նեալ հոգիք 'ի միասին ժողովեալք
 և ամբոխեալք : այսպէս թէ եթէ
 Ռ.Ժ կարէր ցաւիլ և վշտանալ , առա
 ճել վշտանայր և ցաւիւր միով և եթ
 մեղանջութիւք

մեղանշուծք քով, քան ոչ միսթարի
ամենազան պաշտմամբ սոցին ամե
ցուն. Չի՛նչ կայ ուրեմն յորմէ եր
կնչիւիս, եթէ ոչ երկնչիս 'ի մեղաց :
Լաւ էր լինիլ մի սատակեալ շուն,
մի թունաւոր հողէ գորտ, մի քարբ,
մի վիշապ, քան թէ լինիլ մեղաւոր :

Գ. Ժան. պրոմիստ-Քի ի վերայ տաղելոցն.

Լստանօր մտածեալ և տրամաբանեալ
այսպէս : Ա՛ծ առէ զմեղն անբաւա
լպէս, և ես սիրեմ զնա 'ի վեր քան
զհոգի իմ : Ա՛ծ առաւել համարէ
'ի չար զմի և եթ մահահանացու
մեղն, քան ոչ համարէ 'ի բարի,
զամ գովաբանութիւս, և պաշտմունս
արարածոց իւրոց ամենից : և ես ոչ
ինչ համարեմ 'ի չար զայն մեղն,
ոչ քնի աղագաւ գործեմ զնա, և յետ
գործելոյ զնա, պարծիմ և հպարտա
ւամ 'ի մեղանշուծեան իմում, ինք
նահաւան և ինքնագով պատմեմ զնա,
եւր զգործ իմն քաջութե և արիւ
թեան :

ԹԵ. ԱՏ առ 'ի արտաքսել յաշխարհէն, աւերել և բնաջինջ առնել զ'եդս, ելից պատուհասիւք և աւեր մամլք զերկինս և զերկիր: և սակս ցուցանելոյ 'ի աջս բանաւորաց հանրից, զաշխարհն ռիսակալօ ԹԻ իւր ընդ դեմ մեղաց, վն միոյ և եթ մահացունի մեղանշուԹԵ տարամեքէ զանԹիւս հոգիս, յանհուն և յաւիտեանական բարեաց երկնիդ, և ամէն 'ի վր յց զանհուն և զաւիտեանական շարժարանս դժոխոց. Եւ ես մեղաց ՏԾ, և բազում մեղաց ՏԶ գոյով, սակայն երթամ, գամ, շրջեմ, առաջի բարկացեալ ՏՆ այնորիկ ծիծաղեմ, կատակեմ, ուտեմ, ըմպեմ, ննջեմ, աղտեղութիւն բաժանեմ, և վն զի ունայնազարդ հանդերձ ունիմ, վայելչատես բնակարան ունիմ, զոր աղտեղեմ մեղօք իմովք, վն զի փոքր ինչ բարեբախտութի ունիմ, փքր ինչ գրամ, զոր Թերես ոչ ունելոյ եմ մինչև 'ի վաղիւն, այսպէս ԵՌՆԻ

Թուռի ինչ Թէ մեծ մարդ եմ, պատ
կառելի մարդ, իշխան և Թագաւոր.
Իսկ արդ ով խաբի, կամ դու խե
լագար մեղաւոր, կամ ամէնիմաստ
ԱՃ: 'ի մէջ երկոցունց կարծեաց այ
սոցին, այնչափ հակադրելոց միմեանց,
'ի վր ծանրութե կամ Թեթևութե
մեղաց, որն է սուտ և որն է Ճշմա
րիտ. Ամենեին ոչ խաբի ԱՃ, աղա
ղակեն Սբ հարքն: ուրեմն խաբիս
գու խելագար մեղաւոր, յորժամ
կարծիս Թեթև ինչ լինիլ զմեղն.
Ոհ հիանալի կուրութե մեղաւորին,
որ համարէ զինքն երանի, 'ի մէջ
գարշեւապղծութեց իւրոց, յորժամ
Թշնամի է Այ, ատելի Այ, ատելի
Սրբոց և հրեշտակաց, և պակաս հա
մարելի քան զմի սատակեալ և ժա
հահոտ գաղանն, և առաւել զար
հուրելի, քան զմի դէն դժոխային,
ոպ ասէ ինքն Տր Յօհաննու բերա
նով, Թէ մինչ 'ի ձէնջ սատանայ է.

մաղ Թանգ:

Ստեփանի.

Բնազոր ԱՃ, Թագաւոր Թագաւորաց և Տըն տերանց որովկերպիւհ համարձակիւր յանդիման լինիլ քեզ այսչափ զազիր, այլանդակ և գարշելի մեղաւորս, 'ի քէն ապստամբեալ, քո Թշնամի և մատնիչ լեալ, եթէ 'չ գայր ցաւաբեկ սրտիւ, գլխակոր, ձեռնամած, և խոնարհեալ գետնա չափ, առ 'ի կարգալ առ հայր ողոր մութեց, և ջերմեռանդագունիւ պաղատանօք խնդրել 'ի նմանէ զթողու թի անցանաց իւրոց: գիտեմ արդիօք եթէ ատես զմեղն, և իրաւի հարկէ քեզ ատել զնա՝ անբաւապէս, որով հետե Թշնամի է քեզ, և ուղղակի հակադրեալ ամենարդար և ամենաւրկամաց քոց: Բայց եթէ ատես զոր ինչ ես արարի, 'չ ատես զոր ինչ դու արարեր: ուրեմն Ճանաչեա՛ յարարածոյս քում զկերպարանդ քո, Թեպէտ այսչափ ապականեալ 'ի մեղաց, վեր ուղղեա՛ 'ի նա՛ զառաջին գործառու.

Ծառու թին քո: և մի թոյլ տար զի
 չար կամքն իմ զօրագոյն իցի առ 'ի
 աւերել զկազմունան քո, քան ամե
 նակարող կամօքն քո, առ 'ի պահել
 զնա, և կատարել, ահաւորիկ 'ի վայր
 անկեալ կամ թշուառեալ մեղաւորս
 առաջի քերթեական աթոռոյն մե
 ծու թեանդ քոյ: Խոնարհադէմ և խո
 նարհասիրտ աղաչեմ զքեզ թողուլ
 զմեզս իմ: Իմ կամաւորս թե և զօ
 րու թե իմով զղջանամ և գարշիմ 'ի
 չարեաց իմոց, և որչափ կար է ինձ,
 բառնամ 'ի միջոյ և 'ի չիք դարձու
 ցանեմ զայն իմ գործս իմ, որովք
 թշնամի քո եղէ և ատելի աչաց քոց:
 Զարմանալի սէրն քո առիս և այն
 յոյժգին մեղօտեցութի քո յոյժ
 գնապէս շարժեն զօիրտ իմ 'ի զղջու
 մն: Եւ վս զի ոչ կարեմ զղջանալ
 որչափ կամէի, և որչափ պարտ եր
 ինձ զղջանալ, այսինքն զղջմամբ
 նմանիւ ծովու միում ըստ բանի
 Մարգարէից, ընծայեմ քեզ զան
 հուն

հուն ատելութի ինքեանդ քո առ
 մեղս, փոխանակ պատշաճաւոր ատե
 լութե այնորիկ, զոր մարթ ոչ է
 ինձ ունիլ, և խնդրեմ 'ի քէն զի
 յայսմ բանի ևս լցուցես զամենաթ
 շուառական անկարողութիւն իմ.
 Ատեա՛ ուրեմն անչափապէս զմեղս
 իմ, ոպ իսկ պարտիս, և զատելութի
 քո համարեալ լիւիլ ատելութի ին
 քեան մեղաւորիս. իսկ այժմ ով
 Տ՞ր իմ և հայրն իմ, ներքնդունե
 ցեալ սքանչելագթութե՛ք անձառե
 լեաւ. 'ի խորս անատակ և անեզր բա
 րութեդ քոյ, և 'ի քո հայրական ծո
 ծումդ: խնդրեմ 'ի քէն զի այսպէս
 հաստատիցի և յարատեիցէ մինչև
 ցաւհոտեան այս հաշտութիս մեր.
 Ես խոտան և դժոխապարտ մեղա
 ւորս, հպատակ եղէց այսուհետե
 ամենարդար պատուիրանաց քոյ,
 'ի պատուականս ունեցից զշնորհս
 քո Սէս, և 'ի պատկառելիս համա
 րեցից զամ օրէնսն քո. Դու Տ՞ր իմ

և հայրն իմ, որ ամենակալ ես, ամենախնամ, և ամենողորմ, օգնական լեր ինձ յիմ փորձութիս բանսարկուն, աշխարհիս, և մարմնոյ : Հեռացո՛ր յինէն զիմ առիթս և վտանգս մեղաց, մոռացիր զանցանս իմ հանուրս : զի պաշտելով զքեզ ըստ պարտականութե և ըստ Իմ կարողութե իմոյ՝ ի կենցաղոյս այսմիկ, արժանաւորեցիմ սիրել զքեզ ի հանդերձելումն, հրճուիլ և զմայլիլ ամենափափագելի տեսութեք քով յաւիտեանս յաւիտենից. Ամէն.

ԶՈՐՐՈՐԻ ՄՏԸՆՈՒԹԻ

վս չորրորդի անուր շափաթու :

Լ. Զուգոս պատճոյ մշտց.

Թ. Վասն. պատճի հրեշտակոց.

Մտածեա՛լ զառաջին մեղն, որ գործեցաւ յաշխարհին, այսինքն զմեղն հրեշտակաց : և մտադրապէս քննեա՛լ զպատիժն նր. հրեշտակքն՝ ինչ գոյեաժեալք եին ի գոյութի առաջ քան

զայլս ստեղծուեածս հանուրս, և
 ցուցեալք էին յաբբայութեան երկ
 նից, զարդարեալք անբաւ ուշեմու
 թք, անբաւ իմաստութք, անբաւ
 գեղեցկութք, անմահականք, անա
 րատք, և յարմարք առ 'ի տեսանել
 իսկոյն, սիրել, և փառաւորել զԱՅ
 մչտնչենաւորապէս. Երրորդ մամն
 նց ոչ կամին հնազանդիւ Տէ իւրեանց,
 այլ հակառակեալք ապստամբին 'ի
 նմանէ. Ահա ուրեմն, հտտանեալ
 առ ժամայն իրաւագաւառ բարձրելոյն,
 վճիռն դատապարտութե ընդ դեմ
 ապստամբողաց նախաստեղծից: Իբրեւ
 արձակեալ ճայթմամբ մեծաւ, և զա
 մենեան պարփակեալ կայծակիւ,
 'ի միւռմ կիտում ժամանակի դահա
 վեժ առնէ զնս 'ի բարձանց երկնից,
 և խորասուզ ընկըմէ 'ի անդունդս
 դժօխոց. Բայց Տէ ԱՅ այնքանք
 են, բազմաթիւք են քան զանազն
 ծովու, ոչ ինչ է փոյթ, պատասխա
 նէ ԱՅ. Բայց այնքիկ են վայելչա

Գոյնք արարածքն 'ի մէջ արարածոց
 համայնից : են արդիօք վայելչագոյնք,
 այլ աղտեղեալք են մեղօք, երթայցեն
 սւրբմն 'ի հոռն յաւիտեանական :
 Բայց ՏՐ ԱԾ մի և եթ անգամ մե
 ղան, և ևս խորհրդով միայնով իրաւի
 կ, այլ մահացօրէն մեղան, և բաւա
 կան է այն մեղքն զի ատիցեմ զնս և
 'ի նոցանէ գարշիցիմ յամ յաւիտեանս :
 Գոնէ շնորհեա նց ՏՐ ԱԾ զմի
 կէտ ժամանակի առ 'ի ժողովել
 զմիտս, և զղջանալ : ոչ տեսին եր
 բեք զօրինակ ինչ պատժադրութե,
 և ոչ պառնայար նց զպատիժ :
 դարձեալ եթէ գթայցես 'ի նս, փա
 աւորեացի յոյժ անուն քո ՍԷ,
 զքեզ օրհնաբանեսցեն մինչև ցաւի
 տեան : 'ի քաւութի սխալմոն իւ
 րեանց, խոնարհեցուցանելով խոնար
 հեցուցեն անդադար և անվերջ զան
 ձինս իւրեանց, և փոխանակ անհնա
 զանդութեան միոյ, մեծարեսցեն
 զքեզ անթիւ և անչափ մեծարանօք,
 հպատակու

Հայտնակուութիւն, և ծառայութիւն յան
 շխտեանս յաւիտենից. Առ այդ ամ
 պատճառանս, ասէ ՏՆ ԱԾ, ոչ գոյ
 այլ պատասխանի բաց յայսմանէ, մե
 դան ուրեմն 'ի սմին կիտում ժամանակի
 ընկլուգեալք և անդնդասուղք
 լիցին ամենեքեան 'ի դժոխս. Ո՛վ գա
 տողութեան ԱԾայնոյն, որչափ ստա
 տիկ ես, որչափ երկնչելի և զարհու
 րելի: և սակայն ո՛վ սասակադատ և
 ամենակարօղ ԱԾ, ոչ երկնչին 'ի
 քէն թշուառեալք մարդիքն: դա
 տապարտեցան 'ի քէն նախարարքն
 տանդ քոյ, և ամենակալի Թագաւո
 րութեդ քոյ, և գեռ ևս մեղանչեն
 քեզ աներկիւղապէս, և անխրատա
 բար խոտան գերիք, և ծառայք.
 Ո՛հ կորութե. Ո՛հ յանդգնութե.
 Ո՛հ յիմարութե: որ է 'ի վեր քան
 զամ խօսս և զամ միտս հրեշտակաց
 և մարդկան.

Բ. Ժողով. պարիթ նախասրբի ձեռքոյ.

Ստածեալ զառաջին մեղքն որ գործեցաւ:

Ծեցաւ 'ի մարդկանէ , այսինքն զյա
 դամայ մեղքն , և մտադրապէս քննեալ
 զչարիսն , զորս էած 'ի վր թովանդակ
 ազգի մարդկան , ընդ աշխարհն ընդ
 ամբոյն ժողովեալ 'ի միտս քո զամբ վիշտս ,
 որք տառապեցուցանեն զկեանս մօր
 դիր 'ի միասին զաղքատութի , զամ
 հիւանդութի և ցաւակրութի , զամ
 ատելութիս , թշնամութիս , պակա
 ւութիս կերակրոց , սովութիս , մահս ,
 կռիւս , պատերազմունս , արիւնահե
 ղումս , մարդասպանութիս , կոտո
 բածս , աւերումս ազգաց և քանդումս
 աշխարհիս : կուտեալ 'ի լեառնաչափ
 կարկառի միում , զամ ոսկերս մեռե
 լոց համայնից , 'ի սկզբանէ արարա
 ծոց մինչև 'ի վերջն ժամանակաց ,
 և ամբարձեալ զաչս յերկինս 'ի վր նո
 ցին , և 'ի վր ասացելոց տագնապից
 այլոց ամենեց , զարմանալով զարմա
 ցիր , և յոգոց հանելով ողբաձայն ա
 ղաղակեալ այսպէս . Եղուկ : աւաղ :
 այսչափ անհնարին և աղիողորմ տագ
 նապակոյտ ,

նապակոյտ, է պատիժ միոյ և եթ
 մեղանշուծեան մահուչափին, մի և
 եթ մեղքն է դուռն ընդ որն եմուտ
 յաշխարհն, այսչափ բազմաժողով
 զօրն ամենազան, և ամենադառն չա
 րեաց այսպիսեաց : եթէ ոչ մեղան
 չէր յադամ, յարդարութի, խաղա
 ղութի, բարիք ողբ 'ի բնութէ, բա
 րիք ողբ 'ի շնորհաց Այ, կեանք ա
 մենահեշտ և ամենաջողակ յաշխար
 հիս յայսմիկ, և կեանք ամեներջանիկ
 և յաճիտենական, յաշխարհին յայն
 միկ : երկինք, երկիր, ամ ինչ մերն
 էր . Ո՛հ եթ որչափ մեծ և անիմա
 նալի է չարութի մեղաց, որով հետև
 'ինմանութի սաստիկ և ահաւոր վտա
 կի միոյ, ծածկեաց և ծովացոյց զամ
 ոլորտս տիեզերաց չարիօք համայ
 նիւք . Ապա՛ ուրեմն զայն առատա
 հոս արտասուենս, զորո այնքան մար
 դիքն թափեն 'ի վր տառապանաց
 իւրեանց, որչափ առաւել պարտ էր
 և պատշաճ էր, թափել զնս, և լալ
 'ի

ի լալիւն մեծ ՚ի վր մեղաց, որք են
միայնակ պատճառն տառապանաց նց.
Ի այց ինչ, ո՛հ անիծեալ մեղքն:
այսու ևս նմանիս Թունոյ մահաբե
րի, որոյ առաջին գործառութի այս
է, զի խափանէ զգայարանս տեսու
թե Թունաւորելոյն. Ո՛չ տեսանին
ի մեղաւորաց այ՛քան լուսափայլք
Ճմարտութիք:

Գ. Ժամ. պտուիծն միոյ և ել Ռեշտէն-Բեան
Խոհու-Լափին է դժոխս.

Ստածեալ թէ որչափ սարսափելիք
և իցեն անթիւք և ա՛հնարինք ՚ի վե
րոյ ասացեալք Թշ Լառութիք: սա
կայն բնաւ ոչ ինչ ան, եթէ բաղդա
տես զնս պատժոյ աւիտեանականաց,
որովք պատժին և չարչարին հոգիքն
մեղաւորաց ՚ի դժոխս, վս միոյ և
եթ մեղանջութեան մահուչափին:
քան զի բազումք ՚ի նոցանէ մի ան
գամ միայն մեղան մահացորեն, ըստ
կարծեաց իմաստնոց. Ուրեմն իբրեւ
ի

'ի փապարե միօջէ, նայեաց 'ի զար
 հուրելի հնոցին այնմիկ անդնդայ
 նոյն, և 'ի տեսանելն քո զայնքան հո
 գիսն դատապարտեցեալս վն նուէնոց
 աղտեղութեանց և մեղանաց, որովք
 թաթաւեալ ես և դու, և հետեա
 պէս որովք արժանի ես և դու նու
 նոց չարչարանաց, և թերեւ տուաւ
 արժանի, ունելով զմեղս բազում
 քան ոչ ունին նք: 'ի տեսանելն քո
 զայն ամենաթշուառ հոգիսն, հեա
 ցեալ, ապշեալ, յուշաթափ լեալ ա
 զաղակեա 'ի ձայն մեծ: ուրեմն զազ
 րալի և ամօթալից հեշտութի մի,
 որ 'ի մի կիտում ժամանակի անցա
 նէ սպառի, ուրեմն վարձադրի այն
 պիսի հեշտութի տանջանօք անլսե
 լեօք և յաւիտենականօք. Այո՛ այդ
 չափ է չարութի մեղաց մահուչա
 փից, մինչ զի արժանիք են պատժա
 ւորիլ չարչարանօք և պատուհասիւք
 անիմանալեօք, որոց ոչ գոյ վախճան.
 Է անց երկարութի ամաց իբրեւ հինգ
 հազարաց,

հազարաց, 'ի ժամանակէ յորմէ հետե
 եղբայրասպան կային լողայ, տատա
 նի, ծփայ 'ի մէջ բոցական ծովուն
 այնորիկ, և ոչ ուրեք երևեցաւ դեռ
 ևս ամին ինչ: և զկնի խոշտանկանաց
 այնքանեաց, դեռ ևս ոչ վճարեաց
 և ոչ զնաքարակիտ մի, յայն ծանր
 պարտուց զորս ստացաւ 'ի ձեռն մե
 ղաց իւրոց. Անցցեն հինգ բիւրք
 ամաց, անցցեն հարիւր և հազար
 բիւրք: և դեռ ևս անտանօր եղիցի
 ակիզքն օսոտկակրութեանց նորա՝
 Սակայն ԱԾ նկատե զայն հոգի, զոր
 ինքն ըստեղծ 'ի կերպարանի իւրում,
 նկատե և տեսանե զնա՝ սրտմտեալ,
 անճարեալ, և յուսահատեալ 'ի մէջ
 ահագնատեսիլ և սաստկութորքոք հրոյն
 այնորիկ, լսե զաղիողորմ հեծութիս,
 ողբաձայնութիս, աղաղականս, և գո
 չումս նոր: և ոչ ինչ գեթայ 'ի նա,
 բայց աւէտ ատե, անյարգե, ծաղր
 առնե. Ո՛հ զարմանաց: այն կակղա
 սիրտ և գորովագութ ԱԾ, օր խնամե,
 պահե,

պահե, կերակրե մինչև զմոջիւն մի,
 աստանօր այնչափ կարծրանայ և
 խստանայ, մինչև ոչ շարժիլ և ոչ ինչ
 'ի գուժ, աղադս աւհիտենական ու
 սահառութեան ստեղծուածոյ միոյ
 բանաւորի, որ էր սակաւ ինչ առաջ
 բազմասիրելի դուստրն իւր. Ահ թէ
 որչափ դառն պարտ իցէ լինիլ այն
 լեղին, որ կաթիով միով դառնացու
 ցանէր զանբաւ ծովն իմն մեղրեզէն:
 այն անհունադառն լեղին է մեղք,
 որ դառնացուցանէ զամենամեծ և
 զամենաքաղցրօիրտն Ա. Ե. Կորնչիցի
 ուրեմն, ասէ Ավսեայ Մարգարէ,
 Կորնչիցի յաւհիտեան շամլին, որ դառ
 նացոյց զԱԾ. Զարմանաս և զարհու
 րիս ով մեղաւորդ 'ի վր այսորիկ:
 սակայն գիտասցիք թէ մեղքն 'ի
 դժոխս ոչ պատժադրի բաւականա
 պէս ըստ արժանւոյն: Եւ թէ ԱԾ վս
 միոյ և եւթ մահուչափ մեղանչութե,
 հեղանէր 'ի վր հոգւոյ միայնոյ, զայն
 ամ մորիկ տանջանայ, զոր անպակաս
 տեղացուցանէ

տեղացուցանէ 'ի վր դիւաց և դատա
պարտելոց ամենեցուն, ոչ եր բաւա
կան պատժադրութի ըստ արժանեաց
մեղանշութեան այնորիկ: և ոչ կարե
Այ ձեռն, թէպէտ ամենակարող
իցէ, հարել զմեղաւորն այնչափ սաս
տիկ և ծանր հարուածով, մինչ զի
պատժադրութի ունիցի զհաւասա
րութի ընդ ծանրութե մեղաց նր: Բայց աւէտ, ասեն Աճաբանք մեծ
վարդապետք ոմանք, որչափ սաստ
կապէս և հարիցէ զնա, հանապազ
ելիցի պատժադրութի պակաս և
թեթեւ յոյժ քան զպատժապարտու
թի. Ուրեմն աստ ևս 'ի միտս առ
ով մեղաւոր, թէ զի՞նչ իցէ մեղան
չել ծանրապէս ընդ դէմ Այ, որով
կերպիւր կարեմ ես նկարել պարզա
գունապէս 'ի աչս քո, զարհուրելի
չարութի մեղաց մահու չափից:

Առաջին.

Բարդարե ոչ երբեք ճանաչեցի, զ
ՏԵ

Տէ իմ, զարհուրական վատթարու
 թի մեղաց իմօց: այժմ իջ երբեք ճա
 նաչեցի զնա մինչև ցայսօր: ես ևս
 ընդ այնոցին գառաւորեցայ, որք ըստ
 բանի Սրբոյ աւետարանին, ոչ գի
 տեն զինչ գործեն յորժամ մեղանչեն
 քեզ: Եթէ երբեք առեալ էր իմ
 'ի միտս, թէ որչա՞ի ուրսափելի և
 իցէ դժոխն, սակայն այլ ի՞նչ ոչ է,
 քան թէ ստոճեցական օրինակ իմն,
 լիակատար պատժադրութեան այնո
 րիկ, որոյ արժան էր մեղաւորն,
 եթէ կարէր պատժադրել ըստ ամ
 չարութեան մեղաց: Եթէ ըմբռնեալ
 էր իմ երբեք մտօք իմ վ. թէ 'իչար
 չարելն քո զմեղաւորն հրով աճիտե
 նականաւ 'ի դժոխս, յայժ պակաս
 պատժադրես զնա, քան ըստ պատժա
 պարտութե նր, և անդ ևս բազում
 ողորմն ես: Ինչպէս կարէի երբեք
 մեղանչել քեզ մահացու և դժոխա
 պարտ մեղօք: Բայց ընդէր ոչ իմա
 ցայ զայդ: Ընդէր ոչ տեսի աչօք
 մտաց

մտաց իմոց զայն ամենաստոյգ Ճշմարտութիւն որով հետեւ այնքանիցս անգամ հասեալ է իմ առ ափն դժոխաց, և այնքանիցս անգամ մերձ եղէ 'ի խորատու զիլն իմ 'ի սարսափելի անդունդն այն, և զարհուրելի գիշերն, յորում ոչ գոյ տիւր և ոչ լոյս մինչև յաւիտեան. Աւրեմն ով ամենաքաղցր հայրն իմ, քեզ վայելեն փառք և գովութիւք անլուելիք, վս գթալոյ քո 'ի բազմապարտ մեղաւորս, յորժամ արդարադատ իրաւամբք քովք այն չտփ պատժադրես զայլս հոգիսն անթիւն, որք սակաւ յոյժ քան զիս զայրացուցին զքեզ. Մի թէ մարթիցէ, թէ միւս ևս մեղանչեմ քեզ այսու հետեւ, զկնի այնքան մեծ ողորմութեանդ քոյ, զոր պարտ է ինձ հոչակել ընդ Խաւթի Մարգարէի անպակաս և անդադար մինչև յամյաւիտեանս: մի թոյլ տար զայդ լինիլ, աղաչեմ զքեզ ով հայր իմ. Բաւ է: առաւել քան զամ չափ ամբարշտե

Ծայ.

ցայ, մոլեգնեցայ զայրացուցանելով
 զայն անբաւ և անճառելի բարութիւ
 քո, որում վայելէ ամսերն սրտից
 ամենից. Երանի թէ զօրէի ջնջել,
 և 'ի չիք դարձուցանել զոր ինչ գոր
 ծեցի: ով թէ որքան մեծ յօժարասր
 տութիւն ջնջէի և 'ի չիք դարձուցա
 նէի: ինչ որ և հանտիպելոց իցեր
 ամենապատժապարտ մեղաւորիս .
 Բայց ով Տ՞ր իմ դու, որ մինչև
 ցայս վայր 'ի կիրարկեր զամենագթու
 թիւք քո, յաշագս մեղաւորին, 'ի կիր
 արկ այժմ ընդդէմ մեղի զամենակա
 րողութիւք քո, և աւերեալ, բնաջինջ
 արա՛ զնա, ոչ այնչափ վն զի է՛ չար
 իմ, քան թէ վն զի քեզ հակառակ
 է, և թշնամի է ամենաքաղցր սրտի
 քոյ. Այսպէս ազատեալ իմ յերկեակ
 չարէ, այսինքն 'ի չարէ մեղադրու
 թեան, և 'ի չարէ պատժապարտու
 թեան, արժանի գտայց փառաբա
 նել յերկինս զանուն քո Սք յաւի
 տեանս յաւիտնից. Ամէն.

Հինգ

Տ Ի Ն Դ Ե Ի Ր Ո Ր Դ Մ Տ Ե Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Այս հինգ երորդ աւուրն շափաթու :
Լ. 2-4-ս. պարթմանոր-ԲԷ Բեղայ Ի ՏԻ ԶԵ.
մ. Ժան. պարթման Բեղայ.

Ստածեալ գործնի անասմանելի
պարտականութի ստացար ընդ Այ,
յորժամ մահացորէն մեղար նմա.
Ի միոյ կողմանէ արդարութի Այ
զհատուցումն պահանջէ, և աղաղա
կէ ոյլ գրեալ է 'ի ՍԲ Աւետարա
նին, թէ հատո՞ ինչ զոր պարտիս,
և 'ի միւսոյ կողմանէ, ոյլ կարէ եր
բէք վճարել նմա զպարտսն մեղաց.
Եթէ 'ի մի վայր ժողովեալք էին,
աղօթիւք իւրովք ամ ՍԲքն, եթէ վե
րախ ըմբեալք էին արեամբ իւրով ամ
մարդիբոսքն, եթէ ներմուծեալք
էին բորբոքեալ սիրով իւրով ամ
հրեշտակքն : եթէ ևս 'ի մէջ ամե
նեղուն երեւիւր, համակից նց ինքն
ամենարժան Այ Մայրն, անթիւ
և անհուն արդեամբք իւրովք, ոչ
կարէր

Կարէր ջնջիլ այդ ամ բարեգործու
 Թբք, վճարմամբք, և արժանաւորու
 Թբք և ոչ մահուչափ մեղք մի .
 Այլ և խորհեաց 'ի միտս քո, Թէ
 արարիչ ամենեցուն ՍԺ, որով ձայ
 նիւ և ամենազօր կամաւ իւրով յոչ
 եկց արարչագործեաց զայս աշխարհն
 մեր, նոյն ձայնիւ և նոյն դիւրութբ
 յանգոյութի 'ի գոյութի ածէ զայն
 քան աշխարհս այլս, որքանք են ա
 ճազունք ծովու, և առլնու զնմ Սբ
 և արդար մարդկամբք անթոււնելօք,
 որոց իւրաքանչիւր ոք գերազանցէ
 բարութբ և արդարութբ, քան զինքն
 ամենօրհնեալ Այ Մայրն, Թա
 գուհի հրեշտակաց և Սրբոց: Ես հա
 մարձակութբ և ճշգրտիւ ասեմ, ըստ
 ուսումնագրութեան հարցն Սրբոց,
 և ՍԺաբանից Վարդապետաց, Թէ
 եթէ այնք ամբ մարդիքն, այնչափ
 Սբք և արդարք ննջեին զամս հա
 զարս և բիւրս 'ի վր գետին, անպա
 կաս քրծազգածք և մոխրածածկք
 Ծովա

Ծումապահէին, զմարմինս իւրեանց
 անողորմապէս գանակոծէին, զամ
 բողջ արիւնն իւրեանց Թափէին: և
 մատնէին զանձինս իւրս 'ի չարչա
 րանս խստագոյնս և 'ի կզկծագոյն
 մահն: ասեմ Թէ այդ ամ ճգնու
 Թիք, աղօթք, և տանձանք ոչ էին
 բաւականք առ 'ի վճարել Այ վս
 մահուչափ մեղի միոյ: և Թէ բազմա
 ցուցանես զնս 'ի միտս քո, որքան
 անգամ և կամիցիս, և համանգամայն
 ընդ միոյ և եթ մահուչափ մեղի
 կշռես զնս կշռօք արդարութեան
 Այ, առաւել ծանրասցէ մեղք մի,
 քան զայդ ամ: և Թէ ևս կրկնես
 բազմապատկել հազարապատկել բիւ
 րապատկել զնս, ամ կիտում ժամա
 նակի մինչև ցաւիտեան, ոչ ինչ օգ
 տիցիս, և ոչ երբեք բաւեսցի դրամդ,
 առ 'ի հատուցանել զպարտսն միոյ և
 եթ մեղանչութեան մահուչափին:
 քանզի, ասեն Ածաբանք, ամ բարի
 գործքն արարածոց համայնից, որչափ

պատուհանք և իցեն ըստ ինքեանց,
 սակայն իբրեւ զոչ ինչ են առաջի
 Այ, որում, վն ամենակալութեան,
 և ամենաբարութեան նր իրաւաբար
 վայելեն այն գործքն ամենեքեան,
 և այլք անգրաւապէս մեծագոյնք և
 անթուանելագոյնք : (Բայց յորժամ
 ինքն ամենակալ, և ամենակարօղ արեւ
 բիշն բոլորից Ածյանարգի, Նախատի,
 առ ոտս արկանի, կոխի յաւոյդ և
 խոտելի արարածոյ իւրմէ, որ ուարձի
 պատուել, սիրել, և պաշտել զնա ի
 վեր քան զամ չափ : այդ անյարգումն
 համարի մեծ յոյժ, և անհնարին յանդ
 գնութի իմն, իբր գոլով ուղղապէս
 հակադրեալ մեծութե և բարութե
 Այ, և կերպիւ ինչ խանգարիչ Ածու
 թեան նր : ուստի լոկ արարածքն որ
 չափ արժանիք և ի են, ոչ կարեն եր
 բեք վճարել, և ոչ վն միայ եւ եթ
 մահացունի մեղանշութեան : Մի թե
 ոչ իմանաս դեռ ևս մեղանոր, թե
 զինչ իցե մահացու մեղքն, մի թե
 5 և ոչ

ոչ տեսանես դեռ ևս աչօք մտաց
քոյոց, զայն անատակ անդունդն չա
րութեան, որ ոչ կարէ ծածկիլ գոր
ծառութիւն արարածոց հանրից: և
եթէ ոչ զարհուրիս դեռ ևս 'ի մե
ղաց, զայս մտածելով, հարցանեմ
զքեզ, թէ երբ զարհուրելոց իցես:

Է. Իսկ. Ի. Բ. Բիսպոս վճռի շարքսն է վե
րոյ տառեալս:

Մտածեալ թէ 'ի ոչ կարելն քո հա
տուցանել զանսահման պարտսն մե
ղաց քոց, եկեալ յաշխարհն ինքն ՏՐ
բարձրեալ, և խոնարհապէս զգեցեալ
զնկուն, և զտկար բնութիւն մեր,
յանձն եառ անխմանալի գթութիւն
իւրով զհատուցումն այն, սակս որոյ
հարկապահանջիւր գանձ մի ար
գեանդ և արժանաւորութեան, որ իս
կապէս իցեր անբաւ և անսահման:
Եւ թէպէտ առ հատուցումն այն,
բաւական էր մի միայն գործառու
թիւ Քի, վս անչափելի արժանու
թեան

Թէ նր, զոր օրինակ բաճական էր
 մի միայն երկիրպագութիւն, կամ
 Թեթե ցաւակրութի ինչ: սակայն
 առ 'ի ցուցանել մեզ առաւել զչա
 րութի մեղաց, և զհիւանդութեան
 ծանրութի, 'ի ձեռն պատուականութեան
 դեղոյ, կամեցաւ չարչարիլ
 այնչափ մեծ և անհասարին չարչարա
 նօք, մինչ ոչ կարեն ըմբռնել զնս, և
 ոչ մարդիքն, և ոչ ինքեանք հրեշ
 տակքն. Ոմն Մարգարէ 'ի նախա
 գուշակելն իւրում զայնպիսի չարչա
 րանս, զայլ անուն ոչ կարէ տալ նց,
 քան զանուն ծովու միոյ, որում
 նմանեցուցանէ զնս. Մայեաց ու
 րեմն 'ի կերպարան ինչ խաչելութե
 ֆի, որ իցէ գանակոծ նկարեալ,
 և բոլորովիմբ խոցոտեալ, և Զախչա
 խեալ: և տես 'ի կերպարանի այնմիկ,
 ոյ ՏՐ ՅԾ տանջեցաւ յամ զգայա
 րանան իւր, ունելով իւրաքանչիւրոյ
 զգայարանի նր զիւր յատուկ վշտադ
 նութի. Մայեաց ուր տանջեցաւ յամ
 անդաման

անգամսն իւր: ոչ ունելով նր զող
 քուծի ինչ ի թաթից ոտաց մինչև
 ի գագաթն գլխոյ, ըստ նախագու-
 ջակման Մարգարէին. Տեօ և մօտ
 ծեռն ող տանջեցաւ յամազգէ մարդ-
 կան, որք թէպէտ հակառակեալք
 միմեանց վս ոլեսպէս պատճառաց
 այլոց, սակայն յայսմ բանի համաձայ
 նին, զի անխնայաբար վշտացուցա-
 նեն, և դիւականապէս խոշտանկեն
 զնա. Տեօ, և մօտ ծեռն զինչ իցէ ի
 գանակոծութե ՏՆ ՅԵ ՔԻ, աւն,
 ահաւորի կարկտի նման, թանձրա-
 խիտ և արագանկ հոռումն յոլովից
 հազարաց գանից և հարուածոց, ի
 վր այնքան փափուկ, նրբակաղմ, և
 զգալի մարմնոյ նր, զոր ուժգնապէս
 և անողորմաբար՝ հարկանեն, պատա-
 ռեն, քարդեն չուանեայ, երկաթեայ
 խարսզանօք, հաստ և խուժ խուժ
 բրօք, դահիճք յոգուկք, անգութք,
 գազանաբարոյք, սրտողեալք ևս և
 կատաղեալք ներյորդորմամբ ամենա

չար բանսարկունքն. Տէս, և մտա
 ծեա՛ զի՛նչ իցէ այն կսկծագոյն, ան
 լուր, և նորատեսիլ չարչարանք, յոր
 ժամ պօսակեցին զՏժն ՅԾ զարհու
 րելի և խոր խոր կոխեալ փշապսակաւ
 այնոճիկ, որով բոլորովմբ արենա
 Թաթախեցան, ճեղքեցան և ապակա
 նեցան երկիրպագելի գլուխն և երեսն
 նր. Տէս և մտածեա՛ զի՛նչ իցէ կա
 խիլն զՏժն ՅԾ, և մինչև զժամս
 երիս կախեալ մեալն, զձեռնապատառ
 և զոտնապատառ ստոճարից բեւե
 ռանց երից կամ չորից, ՚ի վր խաչա
 փայտին, և մեռանիլ անդ մերկացեալ,
 բնաւ անօգնական և անխնամ ՚ի
 մարդկանէ, առանց ոչ ինչ մխիթա
 րութեան, առանց ոչ ինչ Թեթևաց
 ման ցաւոց, և ամենեին նոճաճեալ
 և անճարեալ. Եթէ ընդ ոտն առիւ
 ծու միոյ երթայցէ փուշ իմն, վաղ
 վաղակի գոչէ, մռնչէ, և ոչ կարե
 հանդուրժիլ ցաւոյն այնմիկուրեմն
 զի՛նչ պարտիմք ասել յաղագո ցա
 ւակրութեանց

Հակութեց Գի, 'ի կախեալ մնալն
 նր բոլորով ծանրութբ մարմնոյ իւ
 րոյ այնքան ժամանակ զի վերոյ ասա
 ցեալ բեւեռանց երկց կամ չորից :
 'ի պահելն նր այնքան ժամանակ
 զգլուխն իւր վերահորեալ և ջար
 դեալ փշովք այնքանիւք, և 'ի հո
 տելն նր վերահորութբք հաշարօք
 զբովանդակ արիւնն իւր. Առ այս
 անպատում խոշտանկանս և վշտագ
 նութիս, յաճել ևօ զնախատինս,
 զարհամարանս, և զհայհոյութիւնս
 հրէից և այլազգեաց. Եւ վն զի
 ՏԵՅՆ նկատե՛ր Ածային լուսով
 իւրով, զաշխարհին զմեղս հանուրս,
 որոց պատճառաւ չարչարիւք և մե
 տանիւք, յաճել մանաւանդապէս
 զցաւս ներքնայինս, և զթախծու
 թիս որովք առաւել ևօ տագնապիւք
 'ի սրտի իւրում, և իմա կերպիւ՛ն ինչ
 զնս ըստ չափոյ յխակալութեան նր
 բնդ դեմ մեղաց, և սիրոյն նր առ
 հայրն իւր, որք եին երկոքին ան
 հաւնք

հուշք և անբաւելիք. Ուսուցանեն
 ոմանք բազմահոգ և մեծալուրժար
 դասպետք, թէ Տէր մեր Յիսուս
 այնչափ չարչարեցաւ, որչափ պարտ
 էր մեղաւորաց հանրից, թէ անցե
 լոց, թէ ներկայից, և թէ անգաղափար
 չարչարիլ և պատժիլ 'ի կենցաղոյս
 այսմիկ վն ձմ մեղաց իւրեանց: ոչ
 միայն մտադիր լինելով նոց, պատե
 ճականութեան անչափելոյն, զոր ու
 նեին Վ. ի չարչարանք վն Ածուծե
 նո, բայց կարծելով ևս թէ ըստ
 մարդկային բնութեան նո, որ բառ
 նայ զմեզս բովանդակ աշխարհի,
 հարկ էր լինիլ հաւասարութի ինչ
 'ի մեջ պարտեաց և հատուցման.
 Իսկ եթէ ճշմարիտ իցէ այն կար
 ծիքն, ով կարէ բերանով առել կամ
 ըմբռնել մտօք զչարչարանաց Վ. ի
 բազմութի և խստութի, ով կարէ
 վերահասու լինիլ խորութեան և լոց
 նութեան անհուն, և անպարագիւր
 ծովուն այնորիկ. Ամենաուրաղ ճշմար
 տութի

Գողթի է ըստ Ածաբանից և ըստ
 հարցն սրբոց ամենից, Թէ անկար
 էր Վ. ի մարդկութե, տեւել և հան
 դուրժիլ չարչարանաց այնքանեաց,
 առանց մեծագոյն հրաշագործութե.
 Բայց ամենաքաղցր ՏՐՆ ՅԽ, որ
 բազմիցս անգամ հրաշագործութեք
 իւրովք Թեթևադոյց, կամ ևս խա
 փանեաց ամենեին զցաւն հաւատա
 ցելոց իւրոց նահատակելոց, զմեծա
 գոյն ևս սքանչելիսն առնէ, զի ինքն
 առաւել վշտագնիցի և չարչարիցի
 վս մեր:

4. Ժամն. Գրգռութեան ի վերայ տապելոցն.
 Եւստանօր մտածեալ և տրամաբա
 նեալ այսպէս. Եթէ մեղք ըստ ին
 քեան և վս յօժարութե մերոյ բնու
 թեան, փոքր բան էր, որով ոչ այն
 քան շարժի Ած ի բարկութի, ուն
 շաղփաղփեն խելագարք, անամօթք,
 և անօրէնք ոմանք ի մէջ Վ. բխտո
 նելից, և Թէ ամենիմաստ Ած զայն
 չափ

չափ հնարս հնարեալ էր, առ ՚ի
 ջնջել, և ունայնացուցանել զնա:
 մի թէ՛ այնչափ զարհուրելապէս
 պատժէր զնա, ոչ միայն ՚ի մարդ,
 որ է գործիչ Նք, բայց ևս ՚ի միա
 ծին որդին իւր, ամօնւին անմեղ և
 ամենաօր, որ միայն անիմանալի բո
 ղութիւն իւրով ինքն զինքն մատոյց
 ՚ի տոյժս փոխանակ այլոց, ոչ գոյ
 երկբայութի ինչ, թէ արդարութի
 Այառաւել յոյժ բացայայտեաց զխս
 տութի իրաւանաց իւրոց, և զատե
 լութի իւր ընդդէմ մեղաց, միով և
 եթ հարուածով Վ.ի, քան եթէ
 փշրեալ էր զաստեղունս, փրդովեալ
 էր զտարերս, և գահավիժեալ էր
 զամ մարդիսն և զամ հրեշտակսն ՚ի
 դժոխս: քանզի կործանումն արարա
 ծոյ հանրից, ոչ ինչ համեմատութի
 ունի, ընդ թեթեւագոյն ցաւակրութի
 Այ մարդացելոյ: իսկ արդ զի՛նչ
 ասացուք եթէ փոխանակ փոքրաշոյն
 ցաւոյ և հարուածոյ միայնոյ, բոլոր
 Վ.ս.

ՎԲ, ԱԺ կատարեալ 'ի բնութիս
 մեր խորասուզեցաւ և վճարեաց
 զկեանս իւր 'իմէջ ծովու միոյ տան
 ջանաց և նախատանաց մեծագունից.
 Ո՛հ Թէ որքան ուրեմն զանազանա
 պէս համարի մեղքն յերկինս, և յայս
 խաւարեալ երկրիս: Ո՛հ Թէ որքան
 անհամեմատքն են առ միմեանս
 կշիռքն մեր, և կշիռքն արդարութե
 ԱՅ: որք ո՛չ կարեն սխալիլ: և այժմ
 անձ զմտաւ զերկուս մեծամեծս ճշմար
 տութիս այսոսիկս. Առաջին է, Թէ
 յորժամ մեղանչես ԱՅ 'ի մահոճանե
 անտի ՎԻ, վերստին 'ի խաչ հանես
 զնա, և ՎԲ ասպան ես: այո՛ կրկին
 խաչես զՏՐՆ ՅԵ, յորժամ մեղան
 չես ԱՅ: ո՛չ ես ասեմ զայդ, բայց
 հոգին ԱԲ ինքն ասէ Պօղոսի բե
 րանով: և պատճառն է այսպէս:
 քանզի եթէ ՏՐՆ ՅԵ ո՛չ եր մեռ
 եալ վն մեղաց համայնից, յորժամ
 մեղանչես ԱՅ, զայնդիսի քնասապար
 տութի նորըստանառ ընդ նմա, որ
 ո՛չ

ոչ կարեր վճարիլ, եթէ ոչ նոյն
 վճարմամբ, որով վճարեաց Վ. Ծ մա
 հաւամբ իւրով 'ի լեառն գողգոթայ
 վժ ծմ մեղաց: և ապա պարտ էր
 Վ. ի կրիին անգամ մեռանիլ, և այն
 քան անգամ պարտ էր նմա մեռա
 նիլ, որքան անգամ վերստին մեղան
 չես Ա. Յ. Ուրեմն տես և զարհու
 րեր, ով մեղաւոր: 'ի սրտի քում
 գեռ ևս գտանէ Վ. Ծ զիւր 'ի վերոյ
 ասացեալ խարազանս, փռւնս, հա
 բուածս, նախատինս, չարչարանս,
 խաչն, և մահն. Ո՛հ ամենաչար օրտի
 մեղաւորաց. Երկրորդ ճշմարտութի
 զոր պարտիս մտածել, այս է, թէ
 յորժամ մեղանչես, 'ի կողմանէ քում
 վե, և որչաի կար է քեզ, անօգուտ
 առնես առ 'ի փրկութի հոգոյդ զչար
 չարանս և զմահն Վ. ի, և բոլորովիմբ
 ունանացուցանես զոր ինչ հնարա
 գոյն կարաց հնարել ամենակարող
 մարդասիրութի Ա. Յ, առ 'ի փրկել
 զքեզ. Զայս խորհելով Վ. ի 'ի վժ
 խաչին

խաչին և 'ի պարտիզի ձիթենեաց,
 ԳԼԺԳՆԱԿԵՍ տագնապեցաւ 'ի սրտի
 իւրում, դառնապէս ելաց, և զայն
 նորատեսիլ և սքանչելի արիւնախառն
 քրտունն թափեաց, ասելով 'ի միտս
 իւր, Թէ ահա մեռանիմ, և մահն
 իմ բաւական էր առ 'ի փրկել, ոչ
 միայն զամ մարդիսն աշխարհիս, բայց
 զաշխարհս այլս յողովս և անթիւս:
 և սակայն, որքան սակաւունք 'ի մարդ-
 կանէ իսկապէս փրկեացին: ահա զայն
 քան հնարս հնարեմ, և զայնքան
 չարչարանս կրեմ առ 'ի հալածել
 զմեզն և աւերել զնա, և սակայն դեռ
 ևս զապաւէն իւր գտցէ և ևս թա-
 գաւորեսցէ 'ի սիրտս մեղաւորաց ան
 թոճելեաց, որք ահաւորելի չարութե-
 թք և ապերախտութք իւրեանց,
 անպտուղ արասցեն, և 'ի չիք դար-
 ձուսցեն զբժշկութի մի, յորում ծա-
 խին ամ գանձք և փարթամութիք
 արբայութե. Տէս մեղաւոր, զինչ
 պատասխանի տայցես տրտմագին հա-
 ռաչանաց այնպիսեաց:

Մաղ

Մատենանք:

Մի Հայր ողորմասէր, և բարեգութ
 ԱՅ: եթէ երբեք յայտնեցեր աշխար
 հին, թէ դու ես Ճշմարտապէս Հայր
 գթութեանց, և եթէ երբեք ի կիր
 արկեր ի դէմս մեղաւորաց զողորմու
 թիս քոյս առատագոյնս: ահա մա
 նաւանդական առիթ և ժամանակ
 առնել զնոյն ի դէմս դարչելոյս մե
 ղունորիս. կայ այժմ առաջի քո հիա
 նալի նորագիւտկերպարան իմն ապե
 րախտութեան, անհաւատարմութե,
 ուխտազանցութեան, և մատնութե:
 զի՞նչ առաւել կարես առնել վս
 ամենագարշ և դժոխապարտ մեղա
 ւորիս, յետ մեռանելոյն քոյ վս նր
 ի վր խաչափայտին. Նթէ հնար
 ինչ իցէր, թէ ես կամեցեալ էի գնով
 իւրիք առնուլ զամենակալ թագաւո
 րութիդ քո, մի թէ մարթ էր ինձ
 թանկագին առնուլ զնա, քան դու
 առեր և գնեցիր զփրկութի հոգւոյ
 իմոյ. Մի թէ իցէ եր ինչ մեծա
 գին,

գին, քան զարիւն և քան զկեանս
մարդացեալ Այ, որ չարչարի և մե
ռանի վն իմ. Չի՛նչ կարծեսցուք
ապա թէ խորհէին ՚ի միտս իւրեանց,
և ընդ միմեանս զրուցէին այն վօե
մական քերօքէք երկնից, յորժամ տե
սանէին զարարիչն ամենեցուն, որ
բնեռեալ ՚ի վր խաչափայտի միոյ, և ՚ի
միջի երկու աւազակաց, մեռանի
ընկրղմեալ, և հեղձուցեալ իբրեւ ՚ի
ծովու միում խոշտանկանաց և անյար
գանաց անձառելեաց և անիմանա
լեաց. Որչափ մեծ պարտ էր լինիլ
զարմացումն վեհից մտաց նց, ՚ի
նայիչն իւրեանց յայնչափ անակնու
նելի և անկարծելի բարերարութե,
որ ոչ կարէր ելանել, եթէ ոչ ՚ի
սրտի անբաւատէր և ամենողորմ Այ.
Բայց ահա վն նց, զարմանալոյ մե
ծագոյն պատճառն: ահա յետ բա
րերարութեան անչափելոյն, ապե
րախտութի անչափելագոյն և սքան
չելագոյն. Չկնի յաւակրութեանց
այնքանեաց,

այնքանեաց, զկնի այնքան արիւնա
խաղ և արտասուհոս վտակաց,
զի՛նչ օգտեցար ո՛վ Տէր իմ. Ո՛չ կա
րացիր դեռ ևս կակղացուցանել և
շահել զքարեղէն սիրտն մեղաւորիս.
Ո՛հ ծայրագոյն ամօթոյ իմոյ, յետ
մեռանելոյն քոյ վա՛ իմ, դեռ ևս ա
պստամբեցայ ՚ի քէն, զվերս քո բացի
նորապէս, և զարիւն քո Սէրնդոտնե
ցի, և կոխան արարի մեղօք իմովք.
Ո՛վ թէ գոնեայ ունէի այժմ զզղջու
մն հաւասար ապաշնորհութեան
իմում: ո՛վ թէ գոնեայ կարէի հա
տուցանել քեզ փոխանակ անիմանա
լի սիրոյն քոյ, զսրտապատառ զղջու
մն մեղաց, և փոխանակ արեանդ՝ քոյ,
զառատահոս արտասուհոս աչաց իմօց
բայց այս ևս պակասի յինէն, և ո՛չ
ունիմ զփոխարէնս ինչ առ ՚ի հատու
ցանել քեզ. Ուրեմն անճարեալ մե
ղաւորիս, այլ ինչ ո՛չ է առնել, քան
թէ դիմել առ քեզ, և մեծատենչ
փափագմամբ հայցել ՚ի քէն զղջումն
այն:

այն : գիտեմ արդեօք թէ ոչ եմ ար-
ժանի, զի շնորհիցես զնա ինձ, բայց
ոչ կարեմ այլուստ ունիլ զնա, եթէ
ոչ դու շնորհիցես. Յանձնէ իմմէ
կարեմ անկանիլ, բայց ոչ կարեմ
վերականգնիլ, կարեմ հեռանալ 'ի
քէն, բայց ոչ կարեմ դառնալ առ
քեզ, կարեմ մեղաւ չել, բայց ոչ կա-
րեմ զղջանալ. Դու ՏՐ իմ, Ճշմա-
րիտ սիրօղն եղկելի հոգոյս իմոյ,
գթութեանց քոյոց այլոց անհամա-
րից, վերաբերեալ ևս զայս նոր ողոր-
մածութի առիս, ձգեալ ինձ զձեռք
քո, կանգնեալ զիս, պահեալ և հաս-
տատեալ : ոչ կարեմ ալ ևս պնտել
'ի չարականութի իմում, և ոչ ապա-
ղել ալ ևս սիրել զամենագութ փր-
կիչն իմ. Ահա ուրեմն ըմբռնեալ և
յաղթահարեալ 'ի մէջ այնքան սիրա-
լից բարեբարութեանց քոց, սիրեմ
զքեզ բորբոքեալ սրտիւ, և 'ի վեր-
քան զայլ ամ ինչ, զղջանամ 'ի մե-
ղաց, և առաւել ունիմ զնմ 'ի գար

շանս քան զայլ ամ չար, գողով նց,
 չարչարանաց և մահուան քոյ թշուա
 ռական պատճառն. Սօսիցին այժմ
 վս իմ նշմարանք վերացն այնոցին,
 որք բացան աղագս իմոյ փրկութե :
 տուր ինձ վս նց զթողութի մեղաց
 իմոց, ներհեղեա յիս զշնորհս քո
 Սբս, և զօրացո՛ զիս առաւել մեռա
 նիլ այսու հետե, քան թէ վերստին
 մեղանշել քեզ :

ՄՏԸՆԹՈՒԹԻՒՆ Ս ԵՅ ԵՐՈՐԴ

Վս աւուրն ուրիաթու : 'ի վերայ
 մահուան :

Թ. յան. Թէ շինէ յոհ :

Ստածեա թէ մահն է մշտնջենա
 շոր բաժանումն մեր 'ի բոլորէ աշ
 խարհէն այսմանէ : Ծանիր ուրեմն
 թէ հարկ է քեզ մերձ ընդ մերձ
 թողուլ 'ի բաց զոր ինչ ունիս և սիրես
 'ի կենցաղոյս այսմիկ : Թողցե՛ս ապա՛

զծնողս քո, զզաւակս քո, զբարե
 կամս քո, Թողցես զամ ինչս քո,
 զամ զրուցակցութիս և ընկերակցու
 թիս քո, Թողցես զազրալի մարմնա
 հեշտութիս քո, Թողցես զայն տուն
 յորում բնակեցար, Թարց ուսադրու
 թեան ինչ վերըստին տեսանել զնա
 երբեք, և գնասցես յայլ երկիրն, յո
 տար և անծանօթ երկիրն, ոչ Թե
 որչափ զանազան եղեցի 'ի մերայնոյ
 աստի երկրէ: որով հետեւ առ ոչ
 ինչ համարի անդ, այդ ամ ինչ, զոր
 այնքան ունիմք աստ 'ի պատուականս.
 Հուպ ընդ հուպ եկեցէ այն աղէ
 տալի օրն, յորում կենդանի լինիցիս
 յառաւօտու, և ոչ կենդանի լինիցիս
 յերեկոյն: յայն աւուրն ամփոփես
 ցեն զքեզ, պատանեացեն, և 'ի վայր
 ձգեալ 'ի դագաղի միում, յափշտա
 կելով տարցեն զքեզ յեկեղեցին, և
 անտուստ 'ի գերեզմանատուն, յո
 րում Թաղեսցեն, և գետնասուզ ա
 րասցեն Ժանդահոտ գէշք քո, յետ
 դարձցեն

դարձցեն, և մոռացեն զքեզ յաւիտեան. Իսկ անդ կոխեալ, խորտակեալ, և սուղ ինչ հետե փթեալ քո բազմասիրելի մարմինդ եղիցի որդանց և հողեգորտից ի կերակուր: այնք են յետ այնորիկ քո մշտնջենաւոր բարեկամք, ընկերակիցք, տնակիցք, և անկողնակիցք. Ահա ուր դառնալի է այս հողեղեն և նեխե ի միսն մեր, զոր այնչափ հետազօտեալ հեշտութե սնուցանեմք և կերակրեմք, մինչև խառնի խուռն առնել զբովանդակ աշխարհն, առ ի պատրաստել զյոք նաժախ և քաղցրաճաշակ սեղանն որդանց և գորտից, ի գերեզմանի մերում. Ասա ինձ հարցանեմ զքեզ, ով մարմնապաշտ Քրիստոնեայ, մի թէ՛ Զջմարիտք ոչ իցեն այս նմաստ ցոլածքս իմ, մի թէ՛ զաւելորդս պատմաբանեմ քեզ, մի թէ՛ ոչ տեսեր ինքն դու աչքովքդ քովք բազմիցս անգամ, զոր ինչ ասեմ. Ե՛հ աղաչեմ զքեզ վսփրկութեան անձինդ, այսու

այսուհետեւ յամ երեկոյն, առաջ քան
զննջենք, պարզեալ անկողնումդ 'ի
վըքամակիդ, խփեալ զաչօ, արձակեալ
զոտօ, և ամփոփեալ զձեռս 'ի վերայ
կրծիդ, ասա՝ 'ի միտս քօ. Ահա՛ Էաթիկ
հետ սուղ ինչ ժամանակի, այօ կեր
պիւնս եղէց ի կապէս և ստուգապէս,
այսպէս պառկեալ և պարզեալ 'ի նաշի
միոյ: և սակայն ոչ խոկամ, և այսպէս
ապրիմ, ուն թէ ոչ երբեք մեռանե
լոց իցեմ.

Ք. մտն. ցուցափս թէ մահն թշ հոգաւորի
է և տնհոգաւորի:

Ատաճեա՛ թէ այս յաւիտեական տա
րամերժումն մեր 'ի բոլորէ աշխարհէ
այսմանէ, այսինքն մահն մեր հա
ւաստի է, և անհաւաստի: հաւաստի
է սակս լինելութեան նր, և անհա
ւաստի է սակս որպիսութեան և եր
բեկութեան նր. 'ի կողմանէ միոյ
ստուգապէս եկեսցէ մահ, յայտնի
ճշմարտութի է: կայսերունք, թա
գաւորք,

Գաւորք, իշխանք, մեծատունք ամի
 նեքեան ընդ ռամկաց, և անարգա
 գունից մարդոց, անխտիր մեռանին
 և կործանին. Մահ 'ի լայնատարած
 դաշարոյ աշխարհիս այսորիկ, նոյն
 մանգաղով անզանազանապէս և անխ
 նայաբար քաղէ զծաղիկս և զխոտն.
 Բայց 'ի կողմանէ այլմէ, ո՛վ 'ի մէնջ
 տեղեակ է որպիսութեան և երբեկու
 թեան անխուսափելի կործանման այ
 նորիկ. Մի թէ՛ կարես դու ինձ
 ասել, յորժամ ելանելոց ես 'ի մար
 մնոյդ այգմանէ քումմէ, և որով կեր
 պի՜ն ելանելոց ես. Մի թէ՛ վաղճա
 նեսցիս 'ի տունէ կամ 'ի գիշերի.
 Մի թէ՛ 'ի տարոյս այսմիկ, կամ 'ի
 տարիս հանդերձեալս. Մի թէ՛ 'ի
 տան քում, կամ 'ի ճանապարհի.
 Մի թէ՛ բնական, կամ բռնաւորա
 կան մահով. Եւ վս այսր բանի որ
 մանաւանդագոյն է, աստ ինձ. Մի
 թէ՛ ունելոց ես զժամանակ խոստո
 վանելոյ. Մի թէ՛ ունելոց ես զխոս
 տովանահայրն,

տովանահայրն , որ պաշտիցէ քեզ
 զԱԲ խորհուրդս եկեղեցւոյ . Մի
 Թէ բարւոք պատրաստելոց ես զամ
 ինչ , առաջ քան երթաս յանդիման
 լինիլ ահագին ատենի Այ , յորում
 պարտիս տալ զհամարս կենցաղաւա
 բութեան քոյ . Մի Թէ ընդդիմա
 նալոց ես ամենաչար Սատանային ,
 որ 'ի ժամանակի մահուան քոյ , յա
 բուցեալ արձակեսցի 'ի վր քո զօրու
 Թէք իւրովք ամենեքումք , առ 'ի
 բռնադատել զբերդն , և յափշտակել
 զհոգիդ 'ի դժոխս . Ո՛հ անդիտու
 Թեան : Ծածկեալ է 'ի մէնջ այդ ամ
 բան . Չայլ ինչ ոչ գիտեմք , բայց
 զայս միայն , Թէ մեռցուք , Թէ կան
 խապէս մեռցուք , և Թէ յորժամ ոչ
 ակնուենիմք , մեռցուք . Եթէ Աճ
 յայտնէր քեզ բերանով հրեշտակի
 ուրուք , Թէ յետ ամի միոյ վաղճանե
 լոց ես . Ո՛հ Թէ որքան բազումք
 էին մինչև ցայն ժամանակ , քո ապաշ
 խարութիք , շերմեռանդութիք և
 բարեզործու

բարեգործութիւնք: բայց ասան ինձ,
մի թէ՛ ոչ կարէ հանդիպիլ թէ ա
ռանց յայտնութեան այնպիսւոյն, և
ոչ յետ ամսոյ միոյ կենդանի լինիցիս,
այլ մեռեալ, թաղեալ, և որդնակուր
լեալ. Ապա ուր են այժմ քո ապաշ
խարութիւնք, ջերմեռանդութիւնք, բա
րեգործութիւնք. Այլ կուրութեան
մերում: զայլ ինչ ոչ հոգամք, բայց
զայս միայն, զի հաստատիցեմք զբնա
կութին մեր 'ի մէջ նանրութեանց
երկրայնոց: ոպ թէ յիմար ոք պնտեր
կամակորապէս յարամեալ 'ի խարխա
րեալ օթեւանի միում, և ևս զարդա
րել զնա՝ ծախիւք և աշխատանօք բազ
մօք, թէպէտ սուղ ինչ աւուրց
հետև փլուզեալ հողահեղձոյց առ
նելոց եր և խորտակելոց զբնակիչն
իւր. Այս հեշտութե հետևեցայց,
ասեմք, այս անիրաւութեան վրէժ
խնդիր եղէց, զայն անդաստան, զայն
տուն գնեցից: և մինչդեռ զայնքսնս
առաջադրեմք 'ի միտս մեր, ահա
եկեալ

եկեալ հասանի մահն, և զայս ամ
խորհուրդս խափանէ, քակտէ, 'ի
վայր ձգէ զայս ամ մեքենայսն ապա
կեղենս, և զայս 'ի վր աւագու հի
մնեցեալ, կամ 'ի յօդս նկարագրեցեալ
բերդորայսն. Ուր է քան զայդ, յի
մարութի մեծ: յարածամ խորհել
զայնմանէ որ այնչափ արարագաստե
անցանէ, և ոչ խորհել երբէք զայն
մանէ, որ անանցական է.

գ. Իսան. լի է Իսհն մեր մի միայն անգամ լինի:
II տածեալ թէ մահն մեր, և այն
զարհուրելի փոխումն յաշխարհէն
այսմանէ 'ի հանդերձեալ աշխարհն,
մի միայն անգամ լինի, և թէ մոլո
րի մի անգամ, է մոլորիլ յաւիտեան.
Եթէ անկցի փայտն 'ի հարաւ, և
կամ 'ի կողմն հիւսիսոյ, ասէ Տժ,
ուր անկցի փայտն անդ և կացցի.
Որչափ մեծ զգուշութի պարտ եր
Քրիստոնէից ամենեցուն նախահո
գալ, և զամ ջան դնել զի անկանի
ցին

քին յաջակողմն փրկութեան : բայց
 առ 'իսնկանիլ 'ի կողմն աջական 'ի
 մեռանիլն մերում, ոչ է պարտ մեզ
 'ի կեալն մերում երթալ ընդ ահե
 կան կողմն : քանզի ոչ գոյ դժուարա
 գոյն ձեռնարկութի վն մեղաւորին ,
 քան թէ կամիլ չարապէս կեալ և
 բարեպէս մեռանիլ . Սակայն որքան
 մարդիքն կուրացեալք 'ի խաւարե
 կամաւորական անգիտութեան իւ
 բեանց, համարեն զայս այնչափ դիւրին
 և հեշտակատար լինլի . Եւ դժուար
 լութե այնոյ իկ պատճառն այս է, թէ
 մահն մեր, ալ ինչ ոչ է քան մասն
 կ'նաց մերոց : որոյ վն սովորապէս
 միագոյնք են երկոքունք : եթէ սեաւ
 իցե սկիզբն կտաւի միոյ, և սեաւ և
 իցե մէջ նորին, օտուգապէս ոչ
 եղիցի սպիտակ վերջն . Ուրեմն ճշ
 մարտագոյն իմն է, թէ չարապէս
 մեռանի, որ չարապէս ապրի, և թէ
 որպիսի է կեանքն, նոյնպիսի է և
 մահն . Իսկ եթէ անիբացհեղքելի

Ե այս Ճշմարտութիւն , հարցանեմ
 զքեզ մեղաւորդ , որ ընթեռնուս
 զայս , Թէ զինչ առնես դու առ 'ի
 բարւոք մեռանելոյ , և որով յուշադ
 րութեք վերադիտես առ նպատակն
 այն , յորմէ եթէ վրիպեցար մի առ
 դամ , եղև մշտնջենաւոր կորուստն
 քո , յաւիտան զրկեցար յամ բարու
 Թէն , որ էր պատրաստեալ քեզ յեր
 կինս , և յաւիտեան դատապարտեցար
 յանթիւն չարիսն դժոխոց : զինչ
 առնես . Ես ասացից , քանզի ոչ ու
 նիս դու զպատասխանի : Թաթաւել
 զհոգիդ յառաւօտու մինչև յերեկոյն ,
 'իմէջ աղտեղութեանց հաղարաց :
 կեալ և մնալ կամակորապէս 'իմեղս
 մահկանացուս 'ի սկզբանէ տարոյն
 մինչև 'ի վերջն նր : Իբրև զագուաւ
 մի գիշասեր , պղծել և շաղաղել 'իմէջ
 դիականց զօրն ամբողջ , զի ապա
 Թռուցեալ անկարծապէս ընդ երեկս ,
 'ի միում վայրկենի , և միով սլացմամբ
 սլանայցես և հասանիցիս մինչև 'ի
 դուռն

դուռն արքայութեան: այդ է առ
նելն քո. Բայց մի թէ՛ հաճատաս
թէ այդպէս կենցաղաւարելով, սլա
նայցես և հասանիցիս այդպէս յեր
կինս: Ես իջ հաճատամ, ամենևին
իջ հաճատամ ես. Լուր ուրեմն զինչ
է կարծիք իմ'ի վր քո, և զկնի սա
կաւ ինչ աւուրց, տեսցես փորձա
ռութիւն քով, եթէ ճշմարիտ էր,
կամ եթէ սուտ: կամիս փրկել զանձն
քո. Ի արձ 'ի Ճանապարհէ անտի
քումմէ: կամ փոխել զկեանս, կամ
կորնչիլ յաւիտեանս, այդպէս է մե
ղաւորաց բան. զոր ինչ սերմանէ
մարդ զնոյն և հնձեսցէ, ասէ առա
քեալն. Չարապէս մեռանի. Որ չա
րապէս ապրի:

Խաչբան.

Այլ ամենիմաստ ԱՏ, որ Ճանաչես
և բժշկես զախտութիս իմ, իրջափ
գթաբար և խոհեմապէս կամեցար
անժանօթ լինիլ ինձ զօրն մահոճան
իմոյ,

իմոյ, զի ոչ գիտելով իմ զգաւաճա
 նութիս այն թշնամւոյն իմոյ, հա
 նապազ զգուշութեւ վարիցեմ զկեաս,
 և յիւրաքանչիւրում աւուր սպառա
 զրնեալ գտանիցիմ, մի գուցէ եղիցի
 օրն իւրաքանչիւր, յետին օրն կե
 նաց իմոյ, և յաղթահարեալ անկա
 նիցիմ ՚ի պատերազմի: Վս այնորիկ
 այնքանիցս ասես, և այնքանիցս կրկ
 նես ՚ի Սք գիրսն, թէ ՚ի վր հասցէ
 մահ, իբրև զգող, յորժամ ոչ ակն
 ունիմ, և ոչ խոկամ, և ոչ կարծեմ:
 Չայս ևս այնքանիցս անգամ, հաստա
 տես առաջի աչաց իմոյ, մինչդեռ այն
 քանիցս անգամ տեսանեմ աչքովք
 իմովք, թէ անկարծապէս մեռանին
 այնք և այնք զրուցակիցք և ընկերա
 կիցք իմ, այնք և այնք ազգակիցք և
 տնակիցք իմ Սակայն ո՛վ ամենհան
 ճարեղ Աճ: զի ոչ օգտեցար խոհե
 մութեւ, և իմաստալրութեւ քով այ
 դուռիկ: Թէպէտ ստուգապէս գիտի
 ցեմ, թէ մահն իբրև զգողով թշ ա
 մի ոք, ինչ ՚ի վր գայ, և յամ ժա
 մու

մու ևս քան զևս մօտանայ: սակայն
 իբրև զանմիտ և զանբան անասուն
 իմն ի սպանդանոց վարեցեալ, խա
 դամ, հրճուելիմ կապեալ զպարանոցաւ
 խեղդման լարիւն, ոպ թէ ոչ իցեմ
 երբեք ժամանելոց ի տեղն իմոյ
 սպանման և աւիտենական կորստեան:
 Ուր է պատրաստութի իմ առ այն
 զարհուրելի անցումն յաշխարհէն
 այսմանէ ի յայլ աշխարհն, յորմէ եր
 կեան Սբք արդարագոյնք և արդիւ
 նաւորագոյնք, իբր գոլով նց սիւնք
 տատանեալք և անհաստատք, իններ
 քոյ այնչափ ահագին ծանրութեան
 իրաւանաց քոց. Ուր են աղօթք,
 ողորմութիւք, ապաշխարանք առաջ
 ընթացուցեալք, որովք նախահոգայ
 ցեմ զպէտս կարեաց իմոց յայնմ
 երկրին, յորում զայն միայն գտից,
 զոր յառաջ յըղարկեցից. Ասոյ կու
 րացեալ մեղաւորիս: ընդդէմ սորին,
 զայլ ինչ ոչ հոգամ, բաց ի շինելոյ,
 զմի տուն ի վր աւազոյ, ուր հա
 ճաստի

Լաստի գիտեմ թէ կործանելոց է
 կանխապէս : և ահա քայքայեալ իսկ
 այժմ, մերձ է ի կործանումն : մինչ
 պարտ եր ինձ կառուցանել հոգա
 բարձութբ մեծաւ զայն տուն, յո
 բում բնակելոց եմ յաւիտեանս, յոր
 ժամ ըստ ասացելումն Սբ գրոցն
 գնասցէ մարդ ի տուն աւիտեանակա
 նութեան իւրոյ. Ով երկայնամիտ
 և բարեխնամ Տրն իմ : որքան հմտա
 բար խցեցեր ինձ զմմ անցս ճանա
 պարհաց, զի մի կարեցեմ փախչել
 և զերծանիլ ի բարերարից ձեռաց
 քոյ : և սակայն յարաժամ փախչիմ
 և զերծանիմ. Իթէ ոչ Թողում զոր
 կանս վս սիրոյն քոյ, մի թէ ոչ պար
 տիմ Թողուլ և արհամարհել զնս, վս
 զի փախստականք են, և ինքեանք
 զիս Թողուն և լքանեն ի բաց :
 Այո պարտիմ, ով իմ փափագելի բա
 րութի, և վս այնորիկ, եթէ մինչև
 ջայս վայր այնչափ յիմարեցայ, ոչ կա
 միմ այլ ևս մնալ այսու հետե ինոյն
 յիմարութեան

յիմարութե իմում: իմանամ այսօր,
 թէ այնու միայն պարգևես ինձ զայժ
 մու ժամանակի կեանսն, զի պատ
 րաստիցեմ զիս առ 'ի բարւոք մեռա
 նելոյ: Աւրեմն առ այն միայն վարե
 ցից այսու հետե զկեանս իմ, առ այն
 միայն մտադիր եղէց, զի կատարի
 ցեմ զփրկագործութի անձին իմոյ,
 իբր գոլով իմ միայնակ հարկաւոր
 բան, ըստ ասացելումն քոյ 'ի Սբ
 աւետարանին, թէ մի միայն բան,
 այսինքն մեր միայն աւիտենական
 փրկութի, պիտոյ է մեզ յայս աշխար
 հումն: Օգնեա ինձ դու բարերար
 և մարդասէր ՍԺ, ըստ բազում ողոր
 մութեանդ քում: Եւ ինձ անգոս
 նել և 'ի բաց հերքել զսմ ինչ որ ան
 ցաւոր է, և մի թոյլ տար, զի միւս
 ևս ճշմարտիցի զինէն ասացուածն
 'ի քէն, բերանով Սբ և արդար յօ
 բայ: Թէ ետ ՍԺ նմա զտեղի ապաշ
 խարութե, և վարեցաւ նովաւ 'ի գոր
 ծս ամբարտաւանութե և ունայնուե:

ՄՏԱԾՈՒ.

ՄՏԸՆԻՍՈՒԹԻՒՆ ԵՐԸՆ
ԵՐՈՐԴ

Այս աւուրն շափաթու: 'ի վր յա
տուկ դատաստանին:

Խ. Բան. յաշտէս զնորոգորդի.

Ստածեալ թէ ով է զնորոգորդ,
որ վարի յայն յատուկ դատաստան,
որ լինի իսկոյն հետ մահու մերոյ 'ի
վր մեր. Այն զնորոգորդէ հոգիդ
քո, որ 'ի նոյն իսկ վարկենի, յորում
բաժանեացի 'ի մարմնոյդ, և 'ի նոյն
իսկ տեղւոյ, յորում լինիցի այդ բա
ժանումն, տեսցէ զհաւանորեւի դա
տաւորական աթոռն, կանգնեալ և
բարձրեալ 'ի դատումն իւր. Անդ եղ
կեւի հոգիդ 'ի մի թօթափելն անան,
միայնակ վարեացի առանց ազգակա
նադ, առանց բարեկամաց, առանց
ծառայից, առանց ընչից, առանց պա
տուհոյ, առանց բարեխօսի, միայնով ք
զործովք իւրովք, ընդ պահապան
հրեշտակին 'ի մի կողմանէ առ 'ի
վկայել ընդ դէմ նր, և ընդ սատա
նային

նային 'ի միւս կողմանէ, առ 'ի ամ
 բաստանել նմա. Ա՛ւր են այժմ այն
 բարեկամք և սիրականք, որոց հետ
 այնքան զազրալիսն գործէի, և այն
 քան դառնացուցանէից զԱ՛ծ: Եւր
 են, ո՛չ ոք երևի, որ բարեխօսիցի,
 և զպատասխանի ապացի վս քո. Ո՛հ
 անճարութեան թշուառեալ մեղաւոր
 ըին, որ ծանրաբեռնեալ այնքան չա
 րագործութեք, և այնքան ապերախ
 տութեք ընդ դէմ ԱՅ ըստեղծողի
 և հօրն իւրոյ, կացուցեալ այնժամ
 'ի մէջ երկուց աւիտենականութեց,
 կամ պատժոց կամ վարձանաց, այս
 ինքն 'ի մէջ արքայութե և դժոխոց,
 երկմտեալ և սարսափեալ սպասէ դա
 տաւորին այնում, զոր այնչափ ան
 յարգեաց, և այնում դատաստանին,
 յորմէ ո՛չ գոյ երբեք բողբոլմն առ
 այլ դատաստան: և այդ ամ հանդի
 պելոց է քեզ կանխապէս. Ո՛վ գիտե
 թէ ո՛չ իցէ այդ սենեակդ, յորում
 ընթեռնուս զայս, և յորում այնքա
 նիցս

նիցս մեղար, ով գիտե թե ոչ իցե
այն իսկ դատարան, յորում դատե
լոց է զքեզ ԱՃ հուպ ընդ հուպ,
այն սարսափելի դատաստանաւ օ
Թերեւս որմունք այդոքիկ յորս բնա
կիս, յայտնեսցեն 'ի մօտոյ զգարչու
Թիս մեղաց քոց: Լսակայն ոչ 'ի միտ
առնուս և ոչ խոկաս: այլ անդադար
Թաթաւիս յիմարապէս և անասնա
բար՝ 'ի նոյն մեղս գարչութեան օ
Ո՛ւր է բանաւորութիւն մարդոյ օ
Եւ ո՛ւր է Վարիստոնէի հաւատ օ

Ք. ժոսն: յողտգս գարտեորի:

Ատածեա՛ թե ով է դատաւորն,
յորմէ դատի մեղաւոր յատուկ դա
տաստանին, դատաւորն այն է ՏԻ
մեր ՅԾ ՔԾ, փրկիչ աշխարհիս, ԱՃ
կատարեալ և ամենազօր 'ի բնութիւս
մեր: որ երևեսցի պարտաւոր հոգ
ւոյն, ոչ ոմ յառաջին գալստեան իւ
րում, այսինքն հեզամիտ, քաղցրա
օիրտ, հանգարտ, խոնարհ, անոխա
կալ

կալ իբրև զգառն առ 'ի բառնալ
 զմեզս : բայց իբրև զահեղ և զայրա
 ցեալ առիւծն , առ 'ի ցուցանել , թէ
 զոր օրինակ անբաճելի եղև ողորմու
 թիւն իւր , սոյնպէս ամենասաստիկ
 եղեցի իրաւական վրէժ խնդրութի
 իւր . Ուր դառնիցի պատժապարտ
 սիրտ , այնչափ համարձակ և աներ
 կիւղ , որ ոչ զարհուրեցի և ահաբե
 կանիցի առաջի դատաւորին միոյ ,
 որ ամենիմաստ գոյով ոչ կարէ խա
 բիլ , որ ամենամբ լինելով , 'ի հարկե
 ատէ անչափապէս զմեզս , որ ամենա
 կարողութիւններով , զօրէ պատժադ
 րել զնս , թէ ող , և թէ որչափ և կա
 միցի Այն դատաւորն , իսկոյն յեր
 և իլն իւրում , արեգականաւ երեսաց
 իւրոց յայտնեսցի 'ի մի քթթելն ա
 կան , զամ ամպարչտութիւնս մեր ,
 զայնքան զազրագործութիւնս տղայու
 թեան , երիտասարտութեան , և ինք
 նին իսկ ծերութեան , յորում ոչ
 ևս կամիմք հրաժարիլ 'ի մեղաց ,
 թէպէտ

Թէպէտ ոչ այլ ևս կարիցեմք հետ
 ևիլ նց, և ինքեանք զմեզ թողիցեն
 'ի բաց . Յայտ արասցէ այն դատա
 ւորն, թէ զինչ բարիս և գործեցաք,
 չարապէս, այսինքն թիւր, և մեղան
 չական դիտաւորութիւն գործեցաք
 զնս: զոր օրինակ թէ որքան անգամ
 խոստովանեցաք զմեղս, և հաղորդե
 ցաք 'ի պատուական մարմնոյ իւրմէ,
 անարժանապէս և սրբապղծաբար
 խոստովանեցաք և հաղորդեցաք: այս
 ինքն առանց զղջման, առանց առա
 ջադրութեան, առանց պատկառու
 թեան, առանց ջերմեռանդութեան.
 Յայտ արասցէ, թէ դադարելով 'ի
 ձեռնակերտութեանց, և 'ի բանից
 աշխարհականաց ըստ հրամանի ՏՆ,
 'ի աւուրս կիրակէի և տօնից, ոչ սա
 կայն սրբեցաք զնս, պարապելով
 'ի աղօթս և 'ի բարեգործութիս, ոսկ
 իսկ պարտ էր: այլ աւէտ ողծե
 ցաք զնս, թէ անպարկեշտութիւն մե
 րով 'ի տաճարս, և 'ի ժամանակի սոս
 կալի

կալի խորհրդոյն : և Թէ յիմարալից
 խաղարկութեամբք, աղաղակամբք,
 անզգամութեք, և արբեցութեք մե
 րովք յառաճօտութիւն յերեկոյն .
 Յայտ արասցէ զայնքան բարիսն զորս
 կարացաք առնել և ոչ արարաք, զայն
 քան ժամանակ ունայ աբար կորու
 սեալ 'ի սնոտիս, զայնքան դրամ անի
 րաճապէս ծախեցեալ 'ի խաղս, 'ի
 գործս վավաշօտութեան, հպարտու
 Թեան, որկորամոլութեան, փոխա
 նակ բաժանելոյ զնա՝ եղկելի աղքա
 տաց, կամ յետ դարցուցանելոյ զնա՝
 ՏՆ իւրում . Յայտ արասցէ զայն
 քան մեղս, զորս սխալտ եր տեսօ
 դաց, և մանաւանդ հաւց և մարց,
 Տերանց, և երիցանց, խափանել
 յանդիմանութեք և պատժադրութեք 'ի
 որդիսն, 'ի ծառայսն, 'ի ժողովուրդօն
 իւրեանց, և զորս ոչ խափանեցին .
 Քանզի առ 'ի դատապարտիլ 'ի հօւրն,
 ո՞վ աճետարանի ծառն, ոչ է հարկ
 մեզ, Թէ բերեալք իցեմք զչարիս
 պտուղ,

պտուղս, բաճ է եթէ ոչ բերեալք
 իցեմք զպտուղս բարիս: ամ ծառ,
 ասէ Տ՛րն, որ ոչ առնէ զպտուղ
 բարի, հատանի և 'ի հուր արկանի:
 և դարձեալ հրամայէ յայլ ուրեք նոյն
 Տ՛րն այսպէս: քաղցեայ և ոչ ետուք
 ինձ ուտել, մերկ եի, և ոչ զդեցու
 ցիք զիս, հիւանդ եի և 'ի բանտի,
 և ոչ տեսիք զիս: Այդչափ եղիցի այն
 զարհուրելի յայտնութի մեղաց 'ի դա
 տառտանի առանձնականի. Ստածեա
 լնթերցողդ զինչ պատասխանի տա
 ցես, և սարսափեալ զարհուրիք.

Գ. Իտն: յազոֆս գորովնսի:

Ստածեալ եի յետ յայտնութեան
 այնորիկ, հետեւեցի առ ժամայն ան
 դառնալի և անողորբելի դատաւ ճիռն,
 զոր հաացէ Ք՛ս Յ՛ս այս բանիւս:
 երթ յինէն անիծեալ 'ի հուրն աւի
 տենական, փոխեաց յայսրէն դարչե
 լի հողիդ, որ արժան չիս կալ յան
 դիման առաջի աչաց իմոց, ոչ մտցես
 երբեք

երբեք 'ի փառս իմ, գնա՛ ուրեմն 'ի
 հուրն աւհտենական : ընկերակից ,
 և չարչարակից լեր դիւաց այնոցիկ ,
 որոց այնչափ հպատակ եղեր , գնա՛
 զի մատնեցի զքեզ 'ի չար իշխանու
 թի և 'ի սրտմտութի նց : լիցի քեզ
 արիւն իմ 'ի դատապարտութի , որով
 հետեւ ոչ կամեցար վարիլ նովաւ 'ի
 փրկութի . Այս է իրաւական հա
 տուցումն անիրաւութեանց քոց .
 Յետ ամենասաստիկ հրամանին և
 գոչման այգորիկ , 'ի բաց լքեալ մե
 ղաւորն 'ի պահապան հրեշտակէն ,
 և 'ի յաւար թողեալ Սատանային ,
 նոյն ժամայն 'ի նունոյ անկողնէ յո
 ռում մեռաւ , ում այլանդակ և ահա
 գին ծանրութի իմն , գահավիժեսցի
 տագնապաւ մեծագունիւ 'ի անդուն
 դս դժոխայինս . Ո՛րդի՛նչ ասացելոց
 է այն դատապարտեալ մեղաւորն ,
 իսկոյն 'ի մտանելն նր ընդ դրունս
 դժոխոց , որք ոչ ևս բացցին երբեք .
 առ 'ի դառնալ անդրէն և արտաքս
 փախչիլ .

փախչիլ, զի՛նչ առաջելոց է՛, իսկոյն
 'ի տեսանելն և 'ի լսելն նր՝ զայն վրդո
 վումն, աղմուկն, թնդումն, զայնս
 հեծութիս, գոչմունս, կատաղու
 թիս, ուսահատութիս, հայհոյութիս,
 անէծս դատապարտելոց. Ձի՛նչ ա
 թաղելոց է՛, իսկոյն 'ի զգալն նր՝ զան
 տանելի եռանդն բոցոյն և կսկծազին
 հրկիզութի այնորիկ, որոց ոչ եղիցի
 երբեք վախճան և ոչ թուլացումն
 ինչ. Վայ: վայ: ուր եկի: և ուր ան
 կայ. Ո՛հ կուրութե: ո՛հ յիմարութե:
 զինչ կորուսի, և զի՛նչ գտի. Արեւի
 երջանկանալ յաւիտեանս ընդ հրեջ
 տակաց և սրբոց, և ահա՛ 'ի յաւիտեանս
 չարչարեցայց ընդ այսց դիւաց և դա
 տապարտելոց: Վս իմ հանգերձեալ
 եր այն փառք, այն ժառանգութիւն,
 այն թագաւորութիւն, այն բարու
 թեանց ամենից բովանդակութի, որ
 'ի յերկինս: Վս իմ հեղեալ եր այն
 պատուական արիւն, որով առեալ
 եք ինձ փրկիչն զայդ ամ: և ես վա
 թասիրտս,

տասիրտո , յիմարս , և անբանս , վն
 ունայնութեան ինչ , վն զգոճելի
 ազտեղութեան միոյ , փոխանակեցի
 զամբարութի ընդ ամ թշուառու
 թեան . Ո՛հ անիծեալ մեղանաց : Ո՛հ
 անիծեալ հեշտութեանց , Ո՛հ անի
 ծեալ դիճաց , որք զես խաբեղին :
 Ո՛հ անիծեալ աւուրն յորում ծնայ :
 Ո՛հ անիծեալ ծնողաց իմոց : Ո՛հ անի
 ծեալ չարաբախտութեան իմում :
 ուրեմն մինչեւ յամ աւիտեանս բար
 ձաւ յինէն ամ պթութի , ամ յու
 սադրո թի , ամ բարութի . Յանժամ
 ուրեմն գիտացե մեղաւոր , թե
 զի՛նչէ մեղն , քանզի ոչ գիտէ այժմ
 զոր օրինակ ձուկն ըմբռնեալ ի գոր
 ծիսն ձկնորսաց , մինչգեռ մեան գոր
 ծիքն ի մէջ ջրոյ , ոչ գիտէ թե
 զի՛նչէ ըմբռնումն այն , և որքան մեա
 սակար է նմա , բայց զայդ իմանայ
 յորժամ արտաքարչին գործիքն ի
 վր ցամաքի . Իսկ այժմ մեղաւորին
 հակառակ , ի վ կաշէ պատմել զբերկ
 րութի

րուծի երանեալ հոգւոյն, որ իբր
 զդուստր հնազանդ և հաճելի հօր
 իւրում, հրաւիրի այս մխիթարա
 կան, և զոճարձարար բանիւս 'ի ժա
 ուանգութի արքայութեան երկնից .
 Եկ օրհնեալ դուստր իմ, ժառան
 գեա՛ զպատրաստեալ քեզ արքայութի,
 և բերկրեաց յամ աւիտեան . Ո՛վ Թե
 որչափ օրհնաբանէ և երանէ յայնժամ
 զվաստակս իւրս : որչափ հաճոյանայ
 ընդ արարեալ ապաշխարութեան իւ
 րում, ընդ համբերութեան, և խո
 նարհութե իւրում : որչափ խնդայ
 և հրճուի, վս՛նչ հաւանելոյ նր պատ
 րանաց, և խորամանկութեանց բան
 սարկուհին . Իսկ դու ընթերցողդ
 ընտրեա՛ այժմ զորն կամիս յերկո
 սունց դատաւաճից . Է՛ բանդ՝ 'ի
 ձեռս քո .

Ստղեան :

Տ՛իմ Յս՝ Վ. ս իրաւասէր քննող
 որաից և մտաց, Էթե ինձ տուեալ
 եր

եր ընտրել զոր դատաւոր և կամէի,
 սակս վիճի աւիտեանականութեան
 իմոյ, ստուգապէս ոչ կարէի խոհե
 մաբար ընտրել եթէ ոչ զքեզ, որ
 անսահմանօրէն սիրես զփրկութի
 իմ. Սակայն ո՛հ եթ ո՞րքան պարտ
 է ինձ երկնչել, ՚ի սիրոյ քու մէջ յայն
 մանէ, և երկարատե համբերութե
 վս իմ. Ո՞րքան պարտ է ինձ զար
 հուբել, և հարցանել ընդ արդար
 յօջայ, եթ զինչ աւարից յորժամ
 յարիցէ ՏՐ ՚ի դատաստան. Աչ տե
 սանեմ այժմ որչափ մեծ ես, քանզի
 այժմ նստիս, և ննջես իբրեւ զքուն
 երկայնամտութեան քոյ առ մեղա
 ւորս: միայն տեսանեմ զօտրն քո,
 այլ ոչ տեսանեմ զիրաւունս քո:
 Բայց յորժամ զարթուցեալ և կանգ
 նեալ, յօտս կացդ ես առ ՚ի դատել
 զիս: ո՛ր զինչ լինի ՚ի ինձ, և զինչ
 արարից. Յայնժամ իմացայց ո՞րքան
 իրաւագէտ երկնչէին արդարքն, յա
 հաւորելոյն ատենէ այդմանէ քու մէջ,
 և

և որքան մեծ եղև յիմարութի թշո
 ճառելոյս, ոչ երկնչիլ 'ի նմանէ .
 Յայնժամ իմացայց, թէ անսահման
 գոլով սերն քո առիս, անսահման
 ևս գոյր ատելութի քո ընդ դէմ մե
 ղաց իմաց. Ձի'նչ ապա լինիցի ինձ,
 և զի'նչ արարից. Եթէ ըստ բանի
 քում, հազիւ ապրեացի արդարն,
 զի'նչ ուրեմն լինելոց է մեղաւորին .
 Սակայն բանիցս անգամ արժանա
 ճորեցայ մինչև ցայսօր, այս ահադին
 դատաւճռին: Եւ թ յինէն անիծեալ
 'ի հուր աւիտենական. Վանիցս ան
 գամ դասագրեցաւ անուն իմ 'ի
 թիւն դատապարտելոց: և արդէն
 իսկ ինչպէս է խղճմտանք իմ. Եթէ
 'ի ժամոյս այսմիկ հարկ էր ինձ կա
 ցուցանել զանձն իմ յանդիման
 Աճայնում ատենի քում, ուր իցեր
 պատրաստութի իմ: և որպիսի հնա
 րիւ կարէի տալ զհամարս կենաց
 իմոց. Արդարեւ անմարթ է ինչ ու
 բանալ առաջի քո ՏԵ, որ ես ամենա
 Զմարիտ

Ճշմարիտ և Ճշմարտութի ինքնին, զա
 նիմանալի անմտութի իմ, մինչ դեռ
 վարիմ այն ժամանակաւ, որ է պար
 գեւեալ ինձ 'ի քէն, առ 'ի պատրաս
 տել զիս 'ի դատաստան, մինչ դեռ
 վարիմ նովաւ, առ 'ի ստանալ յամ
 աւուր զնոր պարտիսն ընդ արդա
 րութեան բում. Աղէ: իջ կամիմ
 այլ ևս յիմարիլ: գիտեմ թէ յատենի
 քում, իջ որ եղիցի ինձ հակառակ,
 բաց 'ի մեղաց, և թէ իջ որ եղիցի
 ինձ օժանդակ բաց 'ի բարի գործոց.
 Ապա ուրեմն հաստատապէս և Ճշմար
 տաբար ասեմ քեզ, թէ բոլորով կա
 րողութիւն իմով ատեմ զամ մեղսն վս
 քո, ատեմ զնս իբրև զթշնամիսն
 քո, ատեմ զնս իբրև զատեցեալս 'ի
 քէն ատելութեամբ անբաւելեալ.
 Հրաժարիմ ամբողջապէս յամ մե
 ղանչական հեշտութեանց զգայորա
 նաց իմոց: կամիմ արդէն և յայում
 իսկ կիտում ժամանակի փոխել զկեանս
 իմ,

իմ, և զսկիզբն առնել կենցաղամբ
 բութեան Քրիստոնէականին : Կա
 միմ ինչ որ և իցէ կակղացուցանել
 զդատաւոր իմ, և արժանանալ այսու
 հետեւ, աղօթիւք, ապաշխարութեք,
 և ողորմութեք իմովք բառի և աջո
 ղակ դատաստանի 'ի նմանէ . Դու
 բարերար և մաքրասէր ԱՃ, որ առ
 ապա լինելոց ես դատաւոր իմ, և
 այժմ իսկ իմ հայրն ես, մատուցեալ
 զձեռք բարեգթութեանդ քոյ, ար
 տաքարչեալ զիս 'ի տիղմոյս այսմանէ,
 յորում այնչափ վաղուց 'ի վեր ընդ
 մեալ կամ և խորասուզեալ : Զնջեալ
 զբիծս մեղաց իմոց, և շնորհաբաշ
 խեալ ինձ, մաղթեմ զքեզ ընդ բո
 վանդակ Սբ եկեղեցւոյ քոյ, զպար
 տիսն իմ, առաջ քան եկեսցէ օրն
 սաստիկ և անողորմ քննութեան և
 համարապահանջութեան .

ՄՏ ԸՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒԹՆԵՐ ԵՐՈՐԴ

Ասան միւս ևս եօթանի : 'ի վերայ
դժոխաց :

Թ. Ժոան. ցուգոս Լէ շիւնէն ԳԺԻ.

Ստածեալ թէ դժոխ է մի տեղ
ամենաղէտալի, յորում ոչ ինչ բարի
կայ, և յորում գտանին չարիք ամե
նեքեան. Տէս ուրեմն թէ զոր օրի
նակ դատապարտեալք ածին 'ի գործս
մեղանչութեան զամ զգայարանսն,
և զամ զօրութիսն իւրեանց, սոյնպէս
պատժին և ուժգնաբար չարչարին ը
ամ զգայարանսն, և ամ զօրութիսն
իւրեանց 'ի դժոխս. Զգայարան տե
սանելեաց չարչարի զարհուրանօք,
և գարշելութիւն խաւարամած բանտի,
սաստկաբորբոք հրոյն, ահարկու
տանձարանաց, դժնահայեաց դատա
պարտելոց և դիճաց: որոց ամ ոք
այնչափ զաղրագէմ է, մինչ զի տե
տեալ մի անգամ ՍԷ Գաթէրինայ
կուսին

կուսին զմի ի նոցանէ . Լաւ համա
րէր, և առաւել կամէր, ոպ ինքն
ասէր, ճեմել մինչև ցօրն դատաստա
նի մեծի, բոկոսածքք ի վր կայծա
կանաց հրացելագունից, քան միւս
անգամ տնտանել զնա . զգայարան
լսելեաց չարչարի անդադար և անլռե
լի հառաչանօր, ողբամբք, կոծու
թքք, կրճտմամբք ատամանց, ար
տօսրալից գոչմամբք, անիծաբանու
թքք, հայհոյութքք, յուսահատու
թքք դիւց և դատապարտելոց .
Եթէ իջ կարեմ լսել համբերութե
իւնիք զշուն մի կականեալ և բարձ
րաճչեալ, որպէս կարացուք համբե
րել և ժոյժ ունիլ ի լսելն մեր ան
պակաս զշանս խառնի խուռս, և
դորդումն կականողաց և աղմկողաց
այնքանեաց . Չգայարան հոտոտե
լեաց չարչարի անտանելի նեխութե
տեղի, ծծմբոյ, և ինքեանց մարմնոց
Թշուռեալ մեղաւորաց, որոց ժա
հահատութի այնչափ դժնեայ և Թու

նաւոր է ըստ կարծեաց Սք Պօնա
 վէնթուրայ եռամեծ վարդապետի,
 մինչ զի մի միայն 'ի նոցանէ բաւա
 կանայր առ 'ի ապականել զօղոս, և
 մահահարել զբովանդակ երկիրն,
 եթէ 'ի վայր ձգեալ 'ի վր նր, գետ
 նարնկէց և անթաղ մնայր. Չգայարան
 ճաշակելեաց չարչարի դառնագոյն
 լիղով քարբից, գորտոց, օձից, և չա
 րալլոկ սովութիւն և ծարաւութիւն.
 Ո՛վ թէ որչափ անուշահոտք և անու
 շահամբ էին անդ, գարշելիք աղ
 տեղութիւն անասնարանաց մերոց և
 աղբակուտից զզոճելագունոց: և սա
 կայն պակասին ևս 'ի դատապարտե
 լոց այնք զազրագոյնք ուտելիք և
 ըմպելիք. Իսկ այժմ զի՞նչ ասացից
 'ի վր զգայարանի շօշափելեաց, որ
 առաւ լքան զայլ ամ անօրինեցաւ
 'ի գործս կեղտութեան, և հետևա
 պէս առաւելքան զայլ ամ պատժի
 և չարչարի 'ի դժոխս. Չի՞նչ ասեք
 ինձ ո՛վ մարդիք դուք, և զորպիսի
 8 լ հարուածս,

հարուճածս, խոցս, չարչարանս, Թշո
 լառութիս, անձարութիս, կիզու
 Թիս ձեր յիշեք ինձ. Այլք են հա
 րուճաճք, չարչարանք, անձարութիք,
 և կիզութիք դժոխականք, որք են
 պատրաստեալք ձեզ եթէ 'ի մեղա
 մեռանիցիք. Մեր աստի ցաւք, և
 խստակրութիք Թեթեք են, կամ ևս
 ոչ ինչ են 'ի բաղդատութի նց ընդ
 ցաւոց և խստակրութեանց դժոխայ
 նոց. Մեր աստի հուրն ոչ է հուր,
 այլ միայն կերպարան հրոյ, կամ ևս
 ցրտագոյն սառն, եթէ բաղդատեմք
 զնա ընդ ամենասաստիկ հրոյն դժո
 խայնոյ. Եւ արդ զի՞նչ պարտիմք
 համարել, կամ աւէտ զի՞նչ կարեմք
 հմանալ Թէ իցէ այլայլումն այս,
 յորժամ տեսանի յաւաճօտու մի ազ
 նոճական մարդ կենդանի, պառկեալ
 'ի մէջ հեշտակազմ, բազմազարդ և
 բեհեզեայ անկողնոյն, ունելով շուրջ
 ինքեամբ զծառայսն յօլով, որք պա
 տուեն և պաշտեն զնա հոգաբարձու
 Թէ,

ԹԲ, Հնազանդութիւն, և պատկառութիւն մեծաւ, և յորժամ տեսանի ապանոյն ազնունական մարդ ընդ երեկս, մեռեալ և պառկեալ 'ի մէջ բոցերէն անկողնոյն 'ի դժոխս, անյարգեալ և կոխեալ 'ի դիճաց, ատեալ և անիծեալ 'ի բարեկամաց և յազգականաց որ զայրանայ, մռնչէ, կրճտէ զատամուկս, գոչէ, յուսահատի, Հնարէ, զամ ջան դնէ, ծռի, ոլորի, գուցե կարասցէ յոյժ սակաւ յայն կոյտն շրջիլ, և ոչ կարէ • Այլ և զի՛չ առաւելութի տանձանաց եղիցի վս դատապարտելոյն, խորհիլ յարաժամ զնանիրս հեշտութիս անցեալս, և տեսանել թէ փոխարկեցան յայնչափ բազմութիւն և անհնարին թշուառութիսն, առանց ոչ ի՛նչ ճարակութե • Դարձեալ միտքն դատապարտելոյն, խաճարեալ և կուրացեալ ոչ կարածցէ երբեք զայլ ի՛նչ խոկալ, քան զայն միայն որ յաւիտաբար ևս քան զեւ վշտագնեցուացէ զնա • Եւ վախճանապետ

նապէս կամքն նոր խստացեալ ՚ի չարի,
 օրտմտեալ և անճարեալ, հանապազ
 տաեցե տռանց կարելոյ քնասել, հա
 նապազ ցանկացե տռանց կարելոյ
 հասանիլ ցանկացեալ իրին. Ահա
 ուր ժամանեցուցանէ զմարդիկս ճա
 նապարհն մեղաց. Եւ սակայն դու
 այն ճանապարհաւն երթաս ընթա
 նաս զտարիս բոլորս համարձակ,
 աներկիւղ, խաղաղասիրտ և զոճար
 ճամիտ. Ո՛հ յիմարութեան մեծի,
 քան զայլ ամ յիմարութի:

Է. ման. յաղագս գծոյոյ տօնարեւոյտն-ԷԷ.

Ստածեալ թէ այնք համայնք չար
 չարանք անճառելիք և անիմանալիք
 ՚ի վերոյ գրեցեալք, ոչ ինչ էին եթէ
 գոյր նոց վերջն իմն, թող վերջանա
 լոցք էին միայն զկնի հազարաց և
 հազարաց, բիւրոց և բիւրոց ամաց.
 Բայց որչափ անասելապէս և ըմբռ
 նելաբար յաճելանան այն չարչարանք
 դժոխոց, յարակայութիւն և մշտնջենա
 ւորութիւն

Ըորութիք իւրեանց : եթէ 'ի դժոխս
 մի միայն ցաւութիւն կայր, և ևս
 թեթեւ ցաւութի ինչ, զոր օրինակ
 թեթեւ ատամացաւութի, կամ գլխա
 ցաւութի, կամ յորովայնացաւութի,
 աւիտեանական դուրով այնպիսի միայնակ
 ցաւութի, ամենեին զարհուրելի, և
 ամենեին անտանելի չարչարանք էր.
 Նա եթէ միայն հարկաւորիւր մեղա
 ւոր 'ի դժոխս, պառկիլ յաւեժապէս
 'ի վրկողի միոյ, և 'ի վարդեղէնեւ յոքնա
 փափուք անկողնոյն, առաւելագոյն
 չարչարանք էր այնպէս պառկիլն
 մինչև յաւիտեանս 'ի նոյն կացութե,
 քան թէ յայրիլ 'ի մէջ բորբոքեալ
 հրոյն զամս հազարս, և բիւրս, և
 ապա զերծանիլ. Գիտեմ թէ զար
 մանաս մեղաւորդ, ընթեռնելով զայս:
 բայց ոչ կարես ուրանոյլ, եթէ իմա
 նաս զբառից զօրութի: քանզի 'ի
 մէջ աւիտեանականաց և ժամանակա
 շորաց, 'ի մէջ անչափելեաց և չափե
 լեաց, 'ի մէջ անզրաւից և զրաւից,
 ոչ ինչ գոյ համեմատութի: ցաւ մի
որ

որ Թեթև է ըստ ինքեան, եթէ յա
 րամնայ իցէ, լինի ցաւ անբաւելի
 ըստ աւիտեանականութեան. Ուրեմն
 ո՞վ կարէ իմանալ Թէ որչափ անհնա
 րին չարչարանք իցէ ժողովումն ան
 համար ցաւոց կոկծագունից ըստ
 սաստկութեան, և մշտնջենաւորաց
 ըստ յարակայութեան. Եթէ ոչ կա
 րեմք յարատեւել և հանդուրժիլ, և
 ոչ 'ի զբօսանս, 'ի խրախճանս, և
 յայլս ուրախութիս աշխարհականս,
 յորժամ երկարանան 'ի վեր քան
 զչափ, այլ ձանձրացեալք տաղտկա
 նամք, նեղանամք և տրտնջիմք: Ի նչ
 պէս կարասցուք ճենճերեալք և խո
 բովեալք 'ի ամ աւիտեանս, ժոյժ
 ունիլ 'ի մէջ սաստկաբորբոք հնոցին.
 Ո՞հ մշտնջենաւորութե և ո՞հ մշտն
 ղենաւորութեան չարչարանաց դժո
 խայնոց: մի Թէ ոչ իմանան որդիք
 մարդկան: մի Թէ ոչ սարսափին.
 Ուրեմն եթէ անկանիցիմ Թշուառ
 եալ մեղաւորս, յայն ահագին և
 անիմանալի

անիմանալի աւելտենականութեան ,
 զկնի լըուցանելոյ իմոյ արտասուհօք
 իմովք զմի ծով նման ծովուց մեծա
 գունից , ոչ պակասեսցի դեռ ևս մի
 կէտ ժամանակի յերկարութէ տան
 ճանաց իմոց . Ջկնի անցանելոյ այն
 քան բիւրոց ամաց որքանք են ան
 հատք 'իյօդս և աւագունք 'ի ծովս ,
 յայնժամ դեռ ևս սկսանիցին վշտագ
 նութիք իմ . Այսպէս բռնեմք , թէ
 յետ բիւրամեայ ժամանակաշրջութե
 իւրաքանչիւրոյ , գայ մի ՃրնՃղուկ
 ըմպել երբեմն 'ի ծովս և երբեմն 'ի
 գետս զմի միայն կաթլիկ ջրոյ , յոր
 ժամ այն ՃրնՃղուկ դատարկացուս
 ցէ զամ ծովս և զամ գետս աշխար
 հին , անտանօր դեռ ևս եղիցի սկիզբն
 խստակրութեանց իմոց : ոչ եղիցի
 դեռ ևս շիջուցեալ և ոչ ինչ 'ի բոցոյ
 անտի , յորում յայրեցայց , և ոչ դեռ
 ևս պարգևեսցի ինձ կաթլիկ մի ջրոյ
 առ 'ի թեթեացուցանել փոքր ինչ
 զանհանդուրժելի ծարաւութի իմ .

Ո՛հ մշտնջենաւորութե, և հազար
անգամ ո՛հ մշտնջենաւորութե չար
չարանաց դժոխայնոց. Կրկնակի ա-
սեմ, մի Թէ՛ ոչ երկնջին 'իքէն որ
դէք մարդկան: մի Թէ՛ ոչ սարսա-
փին: մի Թէ՛ 'ի սմին հակառակ, ծան-
րացեալք մեղօք մահուչափիւք, և
կապեցեալք զաստի կենաց մի և եթ-
փոքրիկ Թելով, իշխեն ծիծաղել, եք
դել, խրախանալ, զոճարճանալ առ-
եցերն անդնդոյն ահաւորագունոյ.
Ո՛հ հիանալի հակադրութեան: ո՛հ
զարհուրելի այլանդակութեան, հա-
ւատալ զոր ինչ հաւատամք, և ապ-
րիլ ու՛ր ապրիմք:

Գ. Խան. ցաշտփս թէ տըժանի եղեր դժոխոց:

Ստածեա՛ քանի ամք են յորոց հետե
արժանաւորեցար, և ևս բազմիցս ան-
գամ, գահավիժիլ և խորասուզիլ 'ի
մշտնջենաւորական հնոցին այնմիկ,
'ի վերոյ ասացելումն. Եւ դարձեալ
ստածեա՛ քանի մեղաւորք այժմ իսկ
չարչարին

չարչարին անդ, վն մեղաց տակաւուց
 և թեթեւագունից քան զմեղս քո •
 Ուրեմն միայնով բարեգթութեն
 Այ, որ պահեաց զքեզ, իջ անկար
 ՚ի բոցեղէն վրէն այն, և դեռ ևս կեն
 դանի ես: Իսկ եթէ ԱՏ թոյլ տու
 եալ էր անկանիլ անդ, ուր էիր
 այժմ դու, որ զայս գրծս ընթեռ
 նուս • Այժմ կատաղեալ և սրտմտեալ
 զայրանայր ընդ դիւաց և դատապար
 տելոց ՚ի մէջ հրաբորբոք հնոցին: Եւ
 աւաղական ձայնիւ ողբայիր, գո
 չէիր, աշխարհիր յորդաբուղիս ար
 տասունօք, յուսահատէիր: և կրճտե
 լով զատամուս, յօշատելով զան
 դամս, դիւականաբար աղաղակէիր
 և անիծաբանէիր այսպէս • Անիծեալ
 մարմինս, որ վն բոբեական հեշտու
 թեան միոյ, խորասուղ արար զիս
 յայս չարչարանս աւիտենականս •
 Ո՛հ ամբարտաւանութեան և սնա
 պարծութեան: Ո՛հ ընչասիրութե,
 և նանիր փարթամութեան: Ո՛հ զազ
 րալի

րալի մարմնահեշտութեանց: զի՞նչ
 օգտեցայ 'ի ձէնջ. Ահա վս սնոտի
 և երազական երջանկութե, յայրիմ
 աստ և յայրեցայց մինչև յամ աւի
 տեանս. Այ: աւազ: զօրեի փոքր
 ինչ ապաշխարելով, Թողլով զայն
 մնասակար զրուցակցութի, և զայն
 մահաբեր համասիրութի, յետ դար
 ձուցանելով ՏՆ իւրում զայն յափշ
 տակեալ ապրանքն, և հաշտելով ընդ
 այն Թշնամւոյն վս սիրոյն Այ, զօ
 րեի եթէ կամեի զայս առնելով,
 խոյս տալ յայսքանեաց խոշտանկա
 նաց, և ոչ կամեցայ: և այժմ ոչ է
 հնար ազատման յամ աւիտեանս: և
 այժմ զմի միայն ժամ յայնչափ ժա
 մանակէ յայնմանէ, զոր յիմարաբար
 վստնէի 'ի սնոտիս, 'ի վավաշոտու
 Թիւնս, իգամուլութիս, և զզոհելի
 բղջախոհութիս, զմի միայն ժամ
 փոխանակէի առ 'ի ապաշխարել, ընդ
 երկարութեան հազարաց ամաց 'ի
 չարչարանս այսոսիկս, և ոչ կարեմ
 ունիլ

ունիլ զնա՝ Այ: և մինչև յաւիտեանս
 վայ. Այսպէս աղաղակէիր այժմ 'ի
 անդունդս դժոխայինս, եթէ Աճ
 Թոյլ տուեալ էր անկանիլ անդ: և
 սակայն Աճ ոչ ունէր զականջս առ
 'ի լսելոյ զաղաղակս քո, և ոչ զաղիսն
 առ 'ի գթալ 'ի քեզ. Եթէ մեռեալ
 'ի մեղս, ընկլուզեալ կայիր այժմ 'ի
 դժոխս, ոչ ևս կարէիր երբեք տեսա
 նել զանհունապայծառ գեղեցկութի
 Այ, որ սիրահար առնէ և զմայլե
 ցուցանէ զբովանդակ արքայութի
 երկնից: ոչ ևս օգտէին քեզ երբեք
 օգտութի ինչ, հեղեալ Սբ արիւն
 Քի, նր չարչարանք և նր մահն.
 Իսկ այժմ եթէ երկայնամիտ Աճ
 դեռ ևս համբերէ, և շնորհէ քեզ
 զներկայ ժամանակ: մի թէ կարծես
 թէ երկարացուցանէ այդպէս զաւ
 ուրս կենաց քոց, զի դու անդադար
 քաղմացուցանիցես զմեղանջութիս քո
 ընդ դէմ նր, զի անդադար պարապի
 լիս 'ի արբեցութիս, 'ի խաղս, 'ի պղծա
 գործութիս,

գործութիս, և զաղրութիս. Ո՛չ է
այնպէս, այլ շնորհք քեզ ԱՅ զներ
կայ ժամանակ, զի ապաշխարիցիս,
և առ նա՛ գառնայցես: Եթէ ո՛չ ա-
պաշխարիցէք, ասէ ինքն ԱՅ, ամե-
նեքեան կորչիցիք. Ո՛չ փոխարկի
ուրեմն դատաւիճիուն քո, այլ միայն
յապաղի. Ի՛ մամ ապաշխարութիւն,
կամ դժոխ.

Մտչեանք.

Ո՛վ ՏՐ իմ ամենարդար, և ամենա
դութ, մի Թէ՛ մարԹ իցէ, Թէ
սպառնալով ինձ զտա՛նճանս աւելտե՛
նականս, ո՛չ ևս կարիցես ածել զսիրտ
իմ՝ ի փրկական երկիւղն զարհուրե-
լի դատաստանաց քոյ. Ի՛ տեսանելն
իմու՛մ զմշտնջենաւոր հուրն, որ է
պատրաստեալ մեղաւորին, մի Թէ՛ ո՛չ
իմանամ դեռ ևս, որչապ ատելի է
քեզ մեղն, և որչափ յիմարալից յանք
գնութի է, անյարգել զբարձրեալ
ՏՐն ամենեցուն. Ի՛ նչպէս գտաւ
երբէք

երբեք 'ի սրտի իմում այնչափ յայտ
 նի խելագարութի, որով իշխեցի,
 ով ահաւոր և ամենագոր ՍԺ, Թշնա
 մի քո լինիլ, Թող 'ի մի միայն կի
 տում ժամանակի: սակայն ոչ միայն
 զմի կէտ ժամանակի, այլ զամբոս և
 զամս ամբողջս 'ի Թշնամութեան
 քում մնացի, և վստահացայ ևս լի
 մեղօք ծանրագունիւք զուարճանալ,
 բերկրիլ, աներկիւղ և անփոյթ ննջել:
 մի Թէ՛ կարեն ածել զմտաւ մար
 դիքն, կամ և հրեշտակքն զմեծագոյն
 մոլեգնութի. Վարտ էր քեզ արդա
 րակշիռ դատաւոր ՍԺ, առ ժամայն
 'ի գործ արկանել զայն դատավճիռն
 քո 'ի վր' իմ, զոր այնչափ երկայնա
 մտաբար՝ յետս ձգես օր ըստ օրե,
 զի ապաշխարիցեմ, և առ քեզ դառ
 նայցեմ: այո՛ ճշմարտիւ պարտ էր
 քեզ այնպէս առնել, և այնպէս ար
 ժան էր ինձ. Բայց ոչ այնպէս արա
 րեր, ով ամենաողորմ ՍԺ: այլ յա
 ճէտ կամեցար բարեգթութիւն քով,
 յաղթա

յաղթահարել իմոյ չարութեանն ։
 Ուրեմն ապա մի ձանձրանար և իջ
 այժմ, 'ի համբերելոյ թշուառութե
 մեղաւորիս ։ ահա յաղթեալ այնքան
 մեծ բարերարութեք քով, անձնատու
 լինիմ ողորմութե քում ։ Ա՛խ ։ այն
 չափ աշխատեցար առ 'ի գտանել զիս,
 յորժամ փախստական եի 'իքէն, ու
 րեմն մի հալածեր զիս այժմ, 'ի գալն
 իմում առ քեզ, և 'ի անկանիլն իմում
 արտասունալից մաղթանօք, առ ոտս
 ողորմութեանդ քոյ ։ մի խորասուզեր
 յայն անտանելի և աւիտենական հուրն
 զօղկելի հոգիս, զորն փրկեցեր վաս
 տակօք և չարչարանօք այնքանիւք ։
 Զօրացո՛ զիս, Տ՛ր զօրութեց, ընդ
 դիմամարտիլ այսոց պղծութեան, և
 իջ ևս հաւանիլ երբեք, 'ի մեղս մա
 հուչափս, որք տանին զմեղաւորն
 'ի աւետական կորուստն ։ Տո՛ւր ինձ
 երկնչիլ 'ի դժոխոց ։ և մանաւանդ
 այնու պատճառաւ, զի բաժանե զիս
 'իքէն մշտնջենաւորապէս ։ Զնշեա
 սրբով Արեամբ քով, զայն դատով
 Զիւն,

Ճիւղն , որով այնքանիցս անգամ դա
տապարտեցայ 'ի անդունդս դժոխայ
ինս . Եւ այսպէս կենդանի արձան
լեալ իմ բարութեանդ քոյ , որ աղ
թեաց չարութեան իմում , երգեցից
և օրհնաբանեցից զողորմութիւնսն
քոյս յաւիտեանս յաւիտենից . Ամէն .

ՄՏԸՆԹՈՒԹԻՒՒՆ ԱՆԻՔ
նական : որ է ուսումնադրութի :

Աստն բարեպէս խոստովանելոյ :

Ձ . Վան . շինչ պոբո է' տանել տաւշ Ժան
շիտադովոնո-թի-ն .

Մատծեալ թէ ոպ 'ի բարի և ուղիղ
գատավճռին , ոչ է բաճական տալ
զգողն , կամ զայլ մահապարտ ոք 'ի
բանտի : բայց առաւել պարտ է սպա
նանել զնա : սոյնպէս վս առնելոյ
զբարի խոստովանութի , որ է խորհր
դաւոր դատաստան իմն 'ի վր մեղաց ,
ոչ է բաճական գտանել զմեղս , զգու
շաւոր արտաքննութի : բայց առա
ւել

և ել պարտ է սպանանել զնս իրական
 և ճշմարիտ զղջմամբ. Եւ այն իսկ
 զղջումն է գոյացական մասն բար
 ւոյ խոստովանութեան, այնպէս թէ
 ոչ է բարի խոստովանութի, և ոչ կա
 տարի խորհուրդն 'ի վր քո, այլ յա
 ճէտ անարժանապէս և մեղանշաբար
 խոստովանիս, եթէ ոչ ունիցիս զզղ
 ջումն այն. Քանզի ցորբան ժամա
 նակ ոչ ատիցես զարարեալ չարիան
 քո, բնաւ ոչ կարես հաշտիլ ընդ
 Այ, և ընդունիլ զմեղաց թողութի
 'ի նմա՛ն. Իսկ զամենահարկաւոր
 զղջումն այն ստացես այսպէս.
 Նախ պարտ է քեզ առաջ քան
 զխոստովանութի ստեպ ստեպ, և
 ջերմեռանդագոյն սրտիւ խընդրել
 զնա Յայ վս արդեանց Տն փրկչին.
 Երկրորդ պարտ է քեզ մտադրաբար
 քննել զմեղաց ծանրութի, 'ի մատե
 նիս այսմիկ օրինակեցեալն, ընթեռն
 լով 'ի նմա՛ն, ըստ պարապութե քոյ,
 զպատճառս ոմանս ծանրութե այն

պիտոյն, եթէ ոչ կարես ընթեռնու
 զմատենան բովանդակապէս. Եւ ևս
 պարտ է քեզ հնարել հոգաբարձու
 թեամբ մեծաւ, զի կատարեալ իցէ
 զղջումն քո, այսինքն զի զղջանայ
 քեզ, ոչ միայն երկիւղիւ չարչարա
 նաց դժոխոց, կամ յուսով փառաց
 արքայութեան, կամ ևս գարշմամբ
 ՚ի զազրութի մեղաց: Բայց առանել
 վն զի մեղանջելով զայրացուցիւր զԱԾ,
 անյարգեցեր զամենամեծ վայելչութե
 նր, թողեր ՚ի բաց և առ ոչ ինչ հա
 մարեցեր, զայն անբանելի բարութի
 և գեղեցկութիւն, որում պատշաճի
 սէրն սրտից ամենեցուն. Դարձեալ
 զգոյշ լեր թէ պարտի զղջումն քո
 ունիլ զայլ որպիսութի մի, առանց
 որոյ պակասական է, և ամենեին անօ
 գուտ: Կամիմ ասել թէ պարտի
 զղջումն քո արարչական լինիլ, և
 առակցիլ ընդ հաստատուն առաջագ
 րութեան, որով պնտապէս առաջագ
 ընցես ոչ ևս մեղանջել երբեք մահա
 ց
 Թ
 ցօրեն,

ցօրէն, և ոչ առ 'ի զերծանիլ 'ի չարէ
 իմեմնէ, ինչ չար և իցէ, և ոչ առ 'ի
 հասանիլ բարութեան իմեմն, ինչ
 բարութի և իցէ. Ուրեմն ոչ բաւ
 է ասել, կամէի փոխել զկեանս իմ,
 և հրաժարիլ 'ի մեղաց, բայց պարտ
 է կատարելաբար՝ և հաստատապէս ա
 սել, կամիմ և կամիմ: քանզի լի է
 դժոխն այնոքիւք, որք ասէին, կամէի,
 և լի է արքայութի, միայն այնոքիւք,
 որք ասէին, կամիմ և կամիմ: և յայս
 պիտի հաստատ և կորովի առաջադ
 րութէ վախենայ միայն բանսարկու,
 յորժամ խոստովանիս, և զամ հնարս
 հնարէ առ 'ի խափանել զնա: որոյ
 վս և դու պարտիս զամ ինչ հնարել
 առ 'ի ելուզանել զշրումն այն, խնդ
 րելով, և ջերմեռանգասիրտ աղեր
 սիւք ժտելով զնա 'ի հնէ, որում
 ոչ ինչ է անկարելի. Մանաւանդ և
 'ի վեր քան զամ զգուշանալի է, Թէ
 պարտի զշրումն քո արարչական
 և գործադիր լինիլ, յաղաքս խոտորե

լոյ 'ի կասկածանաց և մօտաւոր ար
 թից մեղանչելոյ, այսինքն 'ի պատճա
 ռաց և 'ի տեղաց այնպիսեաց, յորս
 բազմիցս անկանիս 'ի մեղս : զոր օրն
 նակ եթէ երթաս 'ի մի տուն, քան
 յայլ ուրեք վս զբօսանաց, եթէ բա
 րեկամութի ունիս ընդ անձին ու
 մեք, և մանաւանդ եթէ 'ի նոյն
 օթեանս բախիս : որով հետեւ փոր
 ձառութի քով տեղեակ ես, թէ այդ
 ամյօթարդեցանէ զքեզ 'ի մեղս,
 կամ հրաժարեաց 'ի խոստովանութե,
 կամ թող 'ի բաց զայդ ամ : պարտ
 ճանդիս առ 'ի բարեպէս խոստովա
 նելոյ, այլ ևս չերթալ անդ, այլ ևս
 չբնակիլ անդ, կամ արտաքսել զանձն
 այն : և կարճառօտապէս ասելով,
 պարտճանդիս 'ի բաց կա յամ կասկա
 ծանաց և վտանգից մեղաց, որչափ
 կար է քեզ վարքաբար՝ և մարդկօրէն,
 ապա թէ ոչ, մի խոստովանիր, քան
 զի ոչ գոյ ճշմարիտ խոստովանութի
 առանց այնպիսի առաջադրութեան,
 և

և հրաժարման 'ի պատճառաց մեղան
 չութեան. Եւ մի ասեր թէ բաւ է
 ինձ փոշիմանիլ, և խոստանալ այլ ևս
 չանկանիլ 'ի մեղս, իսկ յաղաքս բա
 րեկամութե այնորիկ, ի նշ պիտոյ
 է, 'ի բաց թողուլ զնա, և ոչ ևս տե
 սանել զանձն այն. Մի խօսիր ա գ
 րէս, քանզի ոչ ես գու օրինադիր.
 Այլ օրինադիր է ԱԾ, և ոչ է քեզ
 նորագիւտ օրէնս դրել, զորս և կա
 միս, այլ հարկ է քեզ հնազանդիլ
 օրինաց Այ, որ 'ի ՍԲ գիրսն, և
 ԱԾաբան Արդապետաց բերանով
 պարզապէս և սաստկաբար՝ հրամայե
 քեզ, տարամերժել 'իքէն զամենայն
 վտանգս մեղաց: բայց առաւել աս
 թէ ոչ ինչ է փոյթ ինձ արքայու
 թեան, հոգւոյս փրկութեան, Այ
 բարեկամութեան, այդ ամիւ զանց
 առնեմ, և առաւել կամիմ հետեւիլ
 վավաշտութեան իմում ընդ խառ
 նադնաց կնոջ այնմիկ, թէպէտ իցե
 միայն մի ծածկեալ աղբակոյտ, և
 յետ

յետ սուղ ինչ աւուրց լինելոց իցէ
որդանց կերակուր : այսպէս խօսեաց
և ճմարտապէս խօսեսցիս • Բայց 'ի
մօտոյ իմացես և ուժգնաբար զգաս
ցես թէ ինչ էր փոխանակումն ամե
նաբարի և ամենասիրելի Այ ընդ աղ
բակոյտ և որդնաժառանգ բողի միոյ :

Բ. Իսկ. շինչ պարտ է տանել. է մէջ իրոս
որովորեւեմն.

Ստածեա՛, որով կերպիւ պարտի մե
ղաւոր մատչիլ յատենի խոստովանու
թեան, այսինքն մտածեա՛ թէ պարտի
մատչիլ անդ խոնարհութիւն և պատ
կոտութիւն, յայտնել զմեղս պարզա
պէս և ամբողջաբար • Առանց ոչ ինչ
պահելոյ : առանց արդարացուցանե
լոյ զանձն իւր, և մեղանդրելոյ զան
ձինս այլոց, և առանց փախչելոյ 'ի
խոստովանահարցն յայնցանէ, որք
լաւ հասկացուցանեն նմա՛ զծանրու
թի մեղաց նր, լաւ իրատեն, և ա
պաշխարեցուցանեն զնա՛ ըստ հարկի
սակաւ.

սակաւ յոյժ կամի բժշկել հիւանդն
այն, որ խուզելով խուզէ և խնդրէ
զանգետ և զանիմաստ բժիշկ մի, առ
'ի բժշկել զհիւանդութիւն իւր.
Չի՛նչ կամիս դու մեղանորդ զի
խորհցիմ զքէն, յորժամ ընտրես
զխոստովանահայրն դք, որ ոչ ունի
զականջս առ 'ի լսել, և ոչ զլեզու
առ 'ի խօսիլ, և ոչ զգիտութիւն առ 'ի
խրատել: այլ նմանի քահանայից այ
նոցին, զորս յանդիմանէ ՏՐ այսպէս
'ի գիրս Մարգարեութեան, ասելով
Թէ ոչ յայտնեին քեզ զանիրաւու
թիս քո, առ 'ի շարժել զքեզ 'ի ա
լաշխարութիւն, և դարձուցանել
զքեզ 'ի գերութե քուսմէ. Յորժամ
առնես այդպէս, հարկաւորիմ ասել,
Թէ ոչ զղջանաս ճշմարտապէս, և Թէ
ոչ է փոյթ քեզ փրկութե հոգւոյդ.

Գ. Ժամ. շինչ պարտ է տանել շինի խոստ
վանդութեան.

Ստանեա՛ զի՛նչ պարտ է քեզ առ
նել

նել յեա խոստովանութեան, Թէ 'ի
 դէմս Այ, Թէ 'ի դէմս ընկերաց,
 և Թէ 'ի դէմս ինքեանդ քո. 'Ի դէմս
 Այ պարտ է քեզ ջերմեռանդ և խո
 նարհ սրտիւ գոհանալ զնմանէ, որ
 հաճեցաւ Թողուլ զմեղս քո, պատա
 ոել զմուրհակն աւիտենական մա
 հու, զոր դու ինքն գրեալ եիր անի
 րաւութիւն քով, և վեր հաստատել
 զքեզ 'ի նախնի բարեկամութեան իւ
 րում Յատ այնորիկ պարտ է քեզ
 վերստին խոստանալ նմա, հպատակ
 լինիլ օրինաց նր, սիրել, պատուել,
 և պաշտել զնա 'ի բոլր զամենակալ
 Տրն քո, խնդրելով ջերմեռանդա
 պէս 'ի նմանէ զօգնութի շնորհաց
 իւրոց ընդ դէմ փորձութեանց ապա
 գայից. 'Ի դէմս ընկերաց, պարտ է
 քեզ անդրադարձուցանել նց, զոր
 ինչ պարտական ես, կամ վս ապրա
 նաց զորս անիրաւաբար՝ յափշտակեալ
 ես, կամ վս բարի համբաւոյ, զորն
 'ի բաց բարձեալ ես 'ի նոցանէ, և որ
 է

է մեծագին քան զապրանան : եթէ
 յապաղես առ այդ առանց պատճառի,
 վերստին մեղանջես և յաւելուս 'ի մեղս
 մահուչափս . Արջնապէս 'ի դէմս
 ինքեանդ քո, պարտիս անյապաղ և
 ջերմեռանդապէս կատարել զապաղ
 խարանսն հրամայեցեալս 'ի խոստովա
 նահօրէն : և համանգամայն մտադ
 րաբար քննել, թէ որովք հնարու
 թիք և գործածութիք 'ի բաց կաց
 ցես առ ապա 'ի մեղաց, և հաստատ
 մնասցես 'ի սկսեալ բաւի կենցաղա
 ճարութեան քում . Այնք հնարու
 թիք և գործածութիք են երեք,
 աշխնքն աղօթք, հեռացումն 'ի վտան
 ցից մեղաց, և յաճախութի 'ի Սբ
 'ի որհորդս եկեղեցւոյ . Առաջադրեա
 լութեմն աղերսել գոնեայ ընդ ամ
 քառնօրս և ամ երեկս, յբարերար
 ՍԺ, և զամենօրհնեալ Մայր Նր,
 հաստատել զկամօդ քո առ 'ի ոչ ևս
 մեղանջել մահացօրէն . Առաջադրեա
 լիք ևս երթալ յայն տուն, ոչ ևս տե
 օանել

Բանել զանճն այն, և ամենն ին խան
 գարել զայն բարեկամութի, այնքան
 զնստակար և մահաբերո, Նաջարեան
 խոստովանել այնու հետե բազմից
 անգամ, և յաճախել 'ի Սբ հաղոր
 դութի, առ 'ի զօրանալ ընդ դէմ
 փորձութեանց բանասարկունն. Եւ
 մանաւանդ ազաչեմ զբզ բաղձալի
 ընթերցողդ, վս փրկութեան եղկե
 լի հագւոյդ, զոր պարտիս սիրել և
 խնամել առաւել բան զայլ ամ ինչ,
 Ձի հաստատապէս հաստատիցես 'ի
 միտս քո, իչ երբեք ապավարիս խոս
 տովանութի ինքեամբ որ է բժշկու
 թի մեղաց, առ 'ի գիւրադունապէս
 մեղանչել, 'ի նմանութի մեղաւորաց
 այնոցն, որք յետ անկանելոյ միւս
 անգամ 'ի մեղս, սովոր են աւել, Թե
 ահա վերստին մեղայ, և ոյլ առաջ
 ամբարշտեալս իսկ արդ որով հետե
 պարտ է ինձ վերստին խոստովան
 լինիլ, ինչ փոյթ է ապա, Թե սա
 կաւիցս, Թե բաշմիցս մեղանչեմ.

Մի և նոյն եղեցի սակաւուց և բազ
 մաց Թողութի. Մի Թէ կարէ լի
 նիլ երբէք տրամախօսութի առա
 ճել մեղանչական Այ, և առաւել
 փաստական քեզ քան զայդ: ասեմ առա
 ճել մեղանչական Այ, քանզի ապա
 վարիս առ 'ի բաշմացողանել զմեզս,
 այն իսկ ամենապատուական արեամբն
 Քի, որ պատրաստեալ կայ 'ի Աբ
 խորհուրդն խոստովանութեան, առ
 'ի ջնջել զնս: ասեմ առաւել փաստա
 կան քեզ, քանզի ոչ հաւաստի գի
 տես, եթէ միւս ևս խոստովանես
 ցիս, կամ եթէ արժանապէս խոստո
 վանեսցիս: Իսկ եթէ, երկայնամիտ
 Այ անձառ ողորմութբն խոստովա
 նելոց իցես արժանաբար և օգտակա
 րապէս: սակայն յետ խոստովանա
 թեան, դեռ ևս մնան 'ի մեղուցեալ
 հոգւոյն ներմութեալք ախտութիք
 բազումք: զոր օրինակ զկնի փարատ
 ման ախտաջերմութեան մարմնոյ,
 տակաւին

տակաւին մնան յապաքինեալ հիւանդին նուագումն զօրութեց, Թմութի և տկարութի զգայաբանաց, և այլք. Յոյժ սակաւ, մնայ 'ի մեղաւորին, որ կրկնէ և բազմացուցանէ զիեզօ, վատեար սովորութի մեղաց, որ է մեծագոյն արգելումն փրկագործութեանն. Ի մառնումն դուռ որ ասե, զայս ևս արարից, և ապա խոստովանեցայց, որչափ առաւել մեղանչես, աչափ առաւել դժուար բազործ լինի փրկութիդ քո, այնու զի խաւարի ևս քան զևս միտքդ, խոտանայ ևս քան զևս սիրտդ, բառնանին ի քէն Ս. շնորհքն, որոց ևս քան զևս անարժանի դառնաս, զօրանայ ևս քան զևս բանսարկու ընդ դէմքեդ, և դու ևս քան զևս տկարանաս և նուագդիս ընդ դէմնն. այնպէս Թե ոչ ևս կարասես յաղթել նմա, զերծանիլ 'ի մեղաց, և փրկել զանձն քո:

Մաղթանք:

ՍՎ ՏԻ իմ որ ունիս 'ի ձեռս քո,
 զկեանս, զմահն, և զամ լինելութիս
 իմ, և լինելութիս արարածոց հան
 րից, պարտիմ խոստովանիլ առաջի
 աջաց քոց, և ոչ կարեմ բաց ասել,
 թե այլ ինչ ոչ եր արժան ինձ, քան
 թե պատժիլ 'ի քե՛ն ամբողջական
 կուրութե՛ք մտաց, և ամենեկն 'ի
 բայ թողանիլ. Այ՛ն յետ ամբարշտու
 թեանց այնքանեաց իմոց, պարտ եր
 քեզ ոչ ևս տալ ինձ ճանաչել զմեղս
 իմ, զղջանալ արժանապէս և արժա
 նապէս խոստովանիլ. Բայց ի՛նչ.
 Եթե ըստ բանի մարգարեութեան,
 անօրենութի՛ք իմ հակառակք եղեն
 ինձ, և եթե գոչեն ընդ դէմ թշուա
 ռեալ մեղաւորիս, զի անթողանալիք
 են ըստ բազմութեան և ծանրութե
 իւրեանց, սակայն դու ՏԻ արա՛ վս
 անուանդ քոյ զթողութի. Եթե ոչ
 եմ արժանի, զի շնորհիցես ինձ առ
 ժանաբար՝

Ժանաբար՝ խոստովանիլ, այլ արժա
 նի է Սբ խորհուրդն քո, զի մեղա
 ճոր արժանաբար՝ առ նա՛ մատիցի։
 Եթե ես ոչ եմ՝ արժանի ծառայել
 քեզ, այլ դու ամենարժան ես ծա
 ռայիլ՝ իշմամ արարածոց քոց։ Ուրեմն
 դու բարերար և բարեգուծ Աճ իմ
 և փրկիչն իմ, որ գթալով՝ ի տկա
 րութի իմ ընդ դեմ մեղաց, այնչափ
 աշխարեցեր ի պարտիչ ձեթենեաց,
 և զայն արիւնախառն քրտունսն հո
 սեցեր ի վրձնը, շնորհեա՛ ինձ այսօր
 վս նուեց արտասուճաց և քրտանց,
 ճշմարտապէս և կատարելապէս փոշի
 մանիլ, և ապա՛ հաստատապէս հաս
 տատել ի միտս իմ փոխել այսու հետև
 զկեանս իմ, և բնաւին ի բաց լքա
 նել զմամ պատճառս և զմամ վտանգս
 մեղաց։ Դարձո՛ զիս, և դարձայց,
 բժշկեա՛ զիս և բժշկեցայց, փրկեա՛
 զիս և փրկեցայց։ Ահա՛ քեզ մեղաճոր
 մի յարմար և համաչափ ողորմութեդ

Քուճի

քում: ընկղմեալ 'ի խորս ջարեաց
 իմոց, կարդամ առ խորագոյն վիհն
 բարերար լեթեանդ քոյ, և յուսամ
 'ի քեզ զո ոչ անտես արասցես զիս:
 Բայց աւէտ հողձուցեալ զթշնա
 միօն քո, և զգարաւօն դժոխային 'ի
 կար 'ի քո ծովու խոստովանութեան և
 ամենամբ Արեանդ քոյ, պարտեալ
 և յաղթահարեալ ալթողաց, և բռնա
 ճորաց իմոց, հասուցես զիս յաւի
 տեաց երկիրն արքայութեան երկ
 նից Ամէն.

Ա Ե Ր Զ Ն

Սրբագրութիւն սղալանաց:

Լ. աւելի Բեւե ցո-ցանէ շէրեան և երկուրդ
Բեւե ցո-ցանէ շէրդ:

Ընթերցիր, 4. 12. մտադիր լիցի:
6. 15. ըմբռնել: 7. 17. աւարտեալ:
8. 10. անփոյթ: 9. 6. իմաստութի:
10. 3. գոռոզեալ: 10. 4. ընդդէմ:
13. 1. զգեղնցկութի: 16. 2. մտա
ծելով: 16. 5. այնպէս: 19. 21.
աղաղակեն: 25. 7. ամբարտաւանե
ցար: 25. 13. վրէժխըն լրօղի: 30.
20. բերանով: 33. 21. երկիրպագա
նէի: 34. 8. ծովդ: 34. 13. դե
ռանդ: 35. 2. սակայն: 36. 13.
ինքեանդ քո: 40. 14. բերկրեցու
ցանել: 40. 16. ապագայք: 41. 4.
Գնա: 46. 4. կամքն: 46. 5. կա
տարել: 46. 17. ուժգին. ուժգնա
պէս: 46. 19. 'ի զղջումն այս: 51.
18. կուրու թեան: 53. 7. արդարու
թի: 55. 5. մեղանաց: 56. 3. 'ի մէջ:
57. 8. պարտ իցեր: 59. 8. սարսա
փելի:

փեղի: 60. 13. ամենայն: 64. 5.
 Կաթնագործ: 68. 16. Նրբակազմ:
 75. 18. Հոգևոր: 88. 8. արագա-
 պետ: 89. 12. լիկ: 89. 14. քան
 յետին: 89. 17. սեան ևս իցէ մէջն:
 90. 8. յաւիտեան: 97. 5. դառնա-
 ցուցանէիր: 99. 21. երիտասարտու-
 թի: 102. 11. դատաստանի: 103.
 23. անդրէն: 113. 10. չարալուկ:
 117. 18. ուրանալ: 121. 19. խո-
 րասուղ: 124. 19. որչափ:





